

ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐԻ ՀԱՅ ՅՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՀԵՆՐԻԿ ԲԱԽՉԻՆԵԱՆ

1.

Ճէ. դարի առաջին քառորդին Հայ իրականութեան մէջ սկիզբ առած մշակութային զարթոնքը մեծապէս նպաստեց նաեւ Հայ գրականութեան զարգացմանը: Քնարերգութեան հետ մեկտեղ վերելք ապրեց նաեւ գեղարուեստական արձակը, որը դրսեւորուեց հիմնականում պատմագրութեան, սրբախօսութեան եւ յուշագրութեան ժանրերով:

Յուշագրութիւնը կամ յիշատակարանային գրականութիւնը Հանդէս է գալիս երկու հիմնական տեսակներով՝ ուղեգրութիւն եւ օրագրութիւն: Ստեղծուած են նաեւ յուշագրական բնոյթի տարբեր երկեր, յատկապէս ձեռագրական յիշատակարաններ:

Չարթօնքի շրջանում աննախընթաց վերելք է ապրում մասնաւորապէս ուղեգրութիւնը: Դա պայմանաւորուած էր Հայութեան ընկերային-քաղաքական կեանքի զարգացմամբ, միջազգային առևտրական ու դիւանագիտական աշխուժացող յարաբերութիւններով:

Ուխտաւոր քահանաներից զատ ուղեգրութիւններ են հեղինակում աւելի շատ թուով վաճառականներ ու դիւանագիտական առաքելութեամբ օտար երկիրներ ճամբորդած զանազան անձինք: Նրանց ուղեգրութիւնների մի մասը գրուած է որպէս գործնական, շոր ու ցամաք փաստագրումներ, իսկ մի զգալի մասը յօրինուած է բաւական հետաքրքիր ու պատկերաւոր ոճով, հիմնականում ժամանակի կենդանի խօսուածքների հիման վրայ, մի բան, որ բաւականին նպաստել է գրական աշխարհարարի ձեւաւորմանը: Եարունակելով ու զարգացնելով միջնադարեան ուղեգրութիւնների աւանդոյթները՝ դրանք խորապէս կրում են ժամանակի ոգու, մտածողութեան ու գրական ճաշակի կնիքը, ներկայանալով իբրեւ փաստագրական-գեղարուեստական արձակի նմոյշներ:

ժէ. դարի առաջին ուղեգիրներից է Աւգուստինոս Բաղեցին «Բաղեցի»։ Նա ծնուել է նախորդ Հարիրամեակի վերջին քառորդին՝ Մեծ Հայքի Երնջակ գաւառի Ապարաններ գիւղում։ Նորահաս երիտասարդ է եղել, երբ սկսուել է Շահաբքասեան մեծ բռնազաղթը։ Այդ ահեղ արհաւիրքի ալիքը նրան էլ պոկել է իր Հայրենիքից եւ իր բազմահազար Հայրենակիցների հետ քշել Արաքսի այն ափը։ Յետագայում նա այդ աղէտի նկարագրութեանը նուիրել է «գունեղ մի էջ», որը Ա. Յովհաննիսեանի ենթադրութեամբ, «հանդիսացել է Առաքել Դաւրիթեցու աղբերներից մէկը»⁽¹⁾։ Բաղեցին, ի տարբերութիւն Առաքել պատմիչի, այդ աղէտը նկարագրում է որպէս անմիջական մասնակից, ընդամին՝ խօսում է առաւել պարզ ու կենդանի լեզուով, անձնական տպաւորութեամբ, ուստի եւ նրա խօսքը ունի առանձնակի արժէք։ Ահա թէ ի՞նչպէս է գրում նա.

«Պարսից քագաւորն հեծել առաքեաց, Արգուրումայ բերանէն հետ էջեց. սուրգուն արեց, տարաւ իւր երկիրն. հետ ամենեցուն մեր աշխարհն էլ էջեցաւ։ Եկին հեծելէն հրամանաւ քագաւորին, որպէս կայծակն ի յերկնից. մեզի մէկ ժամ խաղաղութիւն չի տուին, որ ամենայն մարդ իւր ապրանքն պահել էր։ Թողինք տունն ապրանքով լի, հօտն ի դաշտին. հայրն որդին ուրացաւ, մայրն ի դուստրն ուրացաւ. այնպիսի ժամ Աստուած ոչ տայ իւր ստեղծութեանը։ Դուս արին ամենայն մարդ իւր յերկրէն որպէս ցահիր, եւ ինքեանք եղեն սրով եւ նիզակով էշողք. խռոնեցան մէկ գմէկ, որպէս գառն ի ոչխարն խռոնի. լայն ու հառաչանքն ելաւ մինչեւ յերկինս։ Անօրէնքն յառաջ առին ժողովուրդն եւ իւրեանքն յետն ընկան գեղարդեամբ խոցելով... Երբ-ալով երթային եւ լային, որ բարձեալ տանէին գտնմանս իւրեանց. ամենեքեան ի գերի վարեցան...»⁽²⁾։

Այնուհետեւ նկարագրում է Արաքսն անցնելը, որի ընթացքում երջանիկ պատահականութեամբ փրկուել է ինքը, մինչդեռ «շատոնք ի գետ խեխտեցան»։ Փրկութեանը շատերն էլ «ցրտէ եւ խորշակէ, սովու եւ անդութեանց քագում ցաւի տիրացան... Ի ցանապարհն քագում կանայք դնէին իւրեանց ստրնդեայ տղայքն ի վայր երթային վասն տկարութեան։ Այս ցանապարհս տեսնէաք եւ հայէաք ի աջ կողմն եւ ահեակն, եւ ամենայն կողմն, ի ամենայն էարի էով եւ ամենայն ֆօլի էով երեխայք լալիս...»։

Հարազատներից եւ տուն ու տեղից զրկուած Բաղեցին պարսից շահին ծառայող մի եւրոպացի պատուիրակի օժանդակութեամբ 1609 թուականին մեկնում է Արեւմուտք, լինում է Մոսկովեան պետութեան քաղաքներում, Լեհաստանում, որտեղ մնում է միառժամանակ, ապա անցնում է Գերմանիա, Իսպանիա եւ Իտալիա։ Իր գլխով անցածը նա շարադրում է որպէս ինքնակենսագրութիւն (Այս են վարք ֆրայ Աւ-

գուստինոս Բահանային), սակայն քանի որ հիմնականում ներկայացուում են նրա ուղեւորութիւնները՝ ուստի եւ գործ ունենք մի սովորական ուղեգրութեան հետ: Այս ոչ այնքան ծաւալուն երկի մէջ հեղինակը որոշ եւ ուշագրաւ տեղեկութիւններ է հաղորդում իր այցելած երկրների քաղաքական, տնտեսական եւ ընկերային կեանքի մասին, համառօտակի նկարագրում իր տեսած քաղաքները, նշանակալից շինութիւնները: Նրա բնութագրումները բաւական լակոնիկ են եւ աւելի շատ ներկայացնում են նրա հիացմունքն ու զարմանքը, քան նկարագրուող առարկան: Սովորաբար քաղաքներն ու շինութիւնները նա ներկայացնում է «խիստ գովելի», «անթիւ մեծ», «զարմանալի եւ հիանալի», «պայծառ գեղեցիկ» եւ նման մակդիրներով:

Մեր ուղեգրին ամենից աւելի զբաղեցրել են իսպանական եւ իտալական եկեղեցիները: Անշուշտ, միշտ խօսել է նաեւ տեղի հայկական՝ յատկապէս կաթողիկէ եկեղեցիների մասին: Նա պարզահոգի մարդու զարմանքով ու հիացմունքով է պատմում «խիստ մեծ, քաղցր քաղաք» Ֆլորենցիայի եւ նրա աւագ եկեղեցու մասին, որը «խիստ զարմանալի շէնք այ եւ մեծ. զճա [600·000] հոգի աւելի կու տանի. բարձրութիւնն ճ [100] գագ աւելի է. մէջն դուսն անգին քար եւ մարմառ է. այնպէս աշտարակն, ուր զանգակն կու քաշեն՝ երբ մարդ հայի բարձրութեւն՝ աչքն կու սեւանայ. ամենայն սեւ [ու] սպիտակ մարմառով է շինած, եւ բազում զարմանալի բաներ, որ մարդ չէ կարիլ պատմել»:

Ուսումնասէր Հային գրաւել են նաեւ տեղի դպրոցներն ու գրադարանները, որոնց ծաւալն ու մեծութիւնը ողեւորել են նրան: Այսպէս, խօսելով իսպանական վանքերից մէկի մասին, նա նշել է. «մէջն գրքատոյն կայ, որ ծ [50] գագ երկայնութիւն է եւ իւ [25] գագ լայնութիւն է, գրքով լի, զամենայն ոսկով կազմած եւ ամենայն ցեղ լիզուէ ի մէջն կայ»: Մի քանի տող յետոյ անդրադառնալով Սալամանկային, արձանագրել է. «խիստ մեծ քաղաք է, բազում դպրատուն կայ ի մէջն, ամենայն ցեղ լիզու հոն կուսենն եւ ամենայն ցեղ ազգէ հոն կարդացող կայ»:

Ուղեգրութիւններ են հեղինակել նաեւ ժէ. դարի արեւմտահայ ազգային-ազատագրական շարժման նշանաւոր ներկայացուցիչներ Յովհաննէս Թութունջին եւ Մահտեսի Շահմուրատը⁽³⁾:

Յովհաննէս Թութունջին (Վանեցի, Արեւելցի. վախճ. 1703) վարել է եկեղեցական բարձր պաշտօններ, եղել է Կ. Պոլսի պատրիարք, Աղթամարի կաթողիկոս: Նա 1666 թուականին կազմակերպել է Մահտեսի Շահմուրատի առաքելութիւնը դէպի Յրանսիա՝ նպատակ ունենալով վերջինիս աջակցութեամբ կազմակերպել հայ-յունական միացեալ ապստամբութիւն ընդդէմ Թուրքիայի: 1678 թուականին

Թուֆուսըին ինքը ազատագրական ծրագրերով մեկնում է Հարեչտան
և այնտեղից անցնում Իտալիա: Այս ուղեւորութեան մասին նա թո-
ղել է մի փոքրիկ գրաւոր յիշատակարան՝ Պատմութիւն Հապաշտա-
նայ գնալոյ եւ գալոյ քանապարհին ի թուին Քրիստոսի 1678: Այս-
տեղ ընդհանուր գծերով պատկերուած են հիմնականում Հարեչտանի
իւրայատուկ բնաշխարհն ու ներքին կեանքը: Ահա մի բնորոշ հատ-
ուած.

«Եւ երկիրն ամենայն է յոյժ բարութեամբ լի եւ զանազան պըտ-
ղովք, եւ միշտ կանանչ է ի դ [4] եղանակն եւ ջրավէտ, եւ մարդիկ ա-
մենեքեան են մերկ եւ քոպիկ, զատ ի մեծամեծացն, որ մին փութայով
ծածկեն. եւ այս վեց թագաւորութիւնս Հապաշին եւ մին թագաւորու-
թիւն Սընարին չկայ կոյր, կաղ, խոցոտ, եւ այլ այսպիսի ցաւ. եւ
միանք երկրին են կարի վագողք եւ մարդիքն քան զմիւսն»:

Ուղեգրութեան մէջ Յովհաննէս Թուֆուսըին ինչ-ինչ նկատա-
նուածներով ոչինչ չի ասել իր ղիւանագիտական առաքելութեան մա-
սին: Վերջում միայն ինքնաբոլոր արտայայտութիւն է գտել ազգի
ծանր հոգսերով ապրող հոգեւոր հովուի ջերմ հայրենասիրութիւնը,
այլեւ Եւրոպայի կողմից հայերի ազատագրման հաւատը. «... եկաք
ի Ալիկոննայ երկիրն գրանտուգին զոր տէր Աստուած անփորձ եւ եր-
կար կեանք պայծառ պահեսցէ, ի պարծանս ամենայն քրիստոնէից
եւ ի գթութիւնս տառապեալ Հայոց ազգին պանդխտելոց ամէն»:

1682 թուականին Յովհաննէս Թուֆուսըին յատուկ պատուի-
րակութեամբ գտնուել է Վերսալում, Լուիզովիկոս ԺԴ-ի արքունի-
քում: Այստեղ նրան հանդիպել է նրա զինակից եւ գաղափարակից
Մահտեսի Շահմուրատը (Խոջա Մուրատ Բագիչեցի. վախճ. 1684),
որը կատարել է Ֆրանսիա կատարած իր ուղեւորութեան նկարագրու-
թիւնը: Մահտեսի Շահմուրատի այցելութիւնը Վերսալ համընկել է
թագաւորական նոր պալատի եւ պարտէզների շինութեան աւարտին:
Ուստի եւ նա մեծ հիացմունքով ու մանրամասնօրէն նկարագրել է այդ
նորակերտ ճոխ կառոյցները, ոգեւորուած Արեւ-արքայի մեծու-
թեամբ ու փառքով, որի հետ էր նա կապել իր ժողովրդի ազատագր-
ման յոյսը. «Աստուած վայելիլ տացէ թագաւորին եւ ամենայն զա-
ւակաց նորին, ընդ երկայն աւուրս, ի փառս Աստուծոյ եւ ի պարծանս
ամենայն քրիստոնէից եւ ի ցնծութիւն տառապեալ ազգիս Հայոց»:

Արեւմտահայութեան միւս խոշոր գէմքերից մէկը՝ Երեմիա
Չէլէպի Քեովիւրեանը (1637-1695) իր բազմաթիւ ուղեւորութիւն-
ներից մէկի ժամանակ եղել է Ղրիմում եւ գրել մի ուղեգրական յի-
շատակարան, որի մի թերթի օրինակն է առայժմ յայտնի⁽⁴⁾: Այստեղ
նա նկարագրել է յոյների Այա-դըէատտա տօնի ծէսն ու ուխտագնա-
ցութիւնը՝ ստեղծելով գեղարուեստական արձակի մի շափազանց հե-

տաքրքիր նմոյշ: Ահա որքան գունեղ է ներկայացուած յոյն աղջիկների պարը, որ յիշեցնում է վարուժանեան հեթանոս երգերը. «Եւ մերձ եկեղեցւոյն յատեան ի խոտուտն վայր՝ դաս աղջկանց եւ հարսանց պար բոլորելով նեպառնեպ զընթացս կաճաւուցն առնէին, որ ոչ էր ըստ օրինի դստերացն քրակացւոց եւ կամ ովկիանոյն կղզեաց էր յօրինած պարին՝ դառնալով եւ առնելով գոտացն քայլափոխութիւնս, այլ որպէս քէ ստեպ ստեպ վերիվեր բռնելով, այսինքն՝ զձեռս ի ձեռս առեալ եւ երբեմն բազուկէ ընդ բազկաց վերիվայր նեմելով վրագագոյնս եւ շեշտակապակս բոլորածիր մանուածովք իրրեւ անձանց յիսունից վաղասւյաց ընթացիւք ըստ յօղեղինացս տարագուգ պարն բոլորէին, որ ընդ փոյթ ընդ փոյթ նեպիլն շրջապատին քոյլիցն նեմականի՝ գտեսողաց սիրտս ընդ քթեւի ականց իսկոյն յինքեանս ստեպ քարշէին»: Այդ կաթաւող աղջիկների խմբում կար մի վաւաշոս ծերունի (շնծեր), որ քնար էր նուագում եւ պագշոտ հայեացքով նայում «գուարքագունեղ գեղեցկութեանց մատաղատունկն տիոց»: Դրանից այնքան էր մոլեգնել մեր յուշագիր բանաստեղծը, որ իր իսկ խոստովանութեամբ, ցանկացել է տեղում շան սատակ անել այդ «անգեղ եւ գոնեիկ գառամացեալ եւ դառնահոգի» այեւորին: Բայց յետոյ «սպանում է» նրան իր սոյն նկարագրութեան մէջ գեղեցիկ ու տպաւորիչ համեմատութիւններով հակադրելով նրա արտաքին ու ներքին այլանդակութիւնը աղջիկների հմայքին ու գեղեցկութեանը. «... որպէս ագռաւք ընդ վարդենիս, այլ որպէս ընդ ոսկէփետուր սիրամարգացն անձանց նօնական նեմողաց սգացելոց աղուէն քրտի ի միջի կացեալ՝ գոտուտն տգեղ տարաբերեալ գովանայր... ահա՛ շէէր՝ ՚ի շիւան ի բերան, ահա՛ վարդերք մագելիք ի ձեռն խօրեատ շնծերի՝ ահա՛ ջուր պատուական գովացուցիչ՝ ՚ի օձն էր պահապան՝ ահա՛ նեվհէր եւ կէվհէր մատենից՝ ՚ի իժն ի դէմն նստեալ, ահա՛ նոխանեմ կաճաւողացն պարք կաճաւուց՝ եւ ագռաւն տգեղ ի միջի գգմգէր՝ ահա՛ ժողովք խաղուց պերնացելոց որթուց ի վերայ լերանց ինկարուրմանց՝ եւ կինչն ցոռտ գարշելի ի միջի տատանէր»:

Հիւսիսային բօրէաս | վօռէաս | քամին աւելի նպաստում էր «փափկասուն մագելեաց» պարին, «գի մի՛ կիզցէ իլիօսն երկնային զլամբրօնափայլ գեղ նոցա»: Եւ քամուց ծփում էին եւ ուռչում նրանց շղարշեայ զգեստները «իրրեւ գառագաստ նաւուց»: «Եւ ընդ վերիվայր տարածմանց բազկաց եւ սրբնթաց քայլափոխմանցն ոտից՝ հանգերձէն պսպղուն սփռեալ յաջ եւ յահեակ վառամբ տարածէր իրրեւ զդրօշս խելից նաւուց ովկիանական ծովընթացիցն, որք զխելս ընդ նոյն սփռեալ վառվոէին: Եւ ընդ մառագայթ արփեմուտն խիտ առ խիտ սօսայր որպէս զմարգարիտս՝ հանդերձէն կերպասեղէնք նետ գնետիւ հարեալ հողածնաց դիպողաց»: Եւ այդ զգլխիչ տեսարաններից առա-

ջացել էր մի թալկացնող տարփայլից մթնուորտ, եւ «որք տոչորեալք էին տնարգեալք յուռուցումն տարփանաց՝ իւրաքանչիւրքն քափէին անդէն քրտամք գմեղացս տարփականի սրտից՝ որպէս գղեղքափս քոշկաց առ ի գովացումն բորբոքեալ սրտից»: Յիրաւի հեթանոսական ոգով է համակուած այս ողջ նկարագրութիւնը, որի բանաստեղծական գուգահեռներն առկայ են նաղաշ Յովնաթանի սիրոյ եւ իւրաքանչեւ տաղերում:

Յիշարժան է նաեւ պարուհիներին շրջապատած ծաղիկների նկարագրութիւնը, որն ամբողջացնում է այդ ողջ հոգեթով տեսարանի գեղեցկութիւնը. «Եւ ի քայլափոխութեանց հոտոտէր բուրմունքն որ յանձանց եւ ի ծաղկանց զարմագանից գեղաւորաց ի վայրն կանաչորակ ծաղկանց ծիրանեաց եւ դեղնեաց եւ երկնագունիցն եւ մանուշակորաց եւ սպիտակաց երփն երփն յօրինուածոց յօրինեալ ի Յօրինողէն: Յարեւման գանազան կերպարանաց իւրոց, որք իւրաքանչիւր ոք յատկակի ունէին զգեղ դիմաց սրտաքարշից, որպէս եւ բուրումն էր օրինակ գանազան ծաղկանցն բուրմանց, եւ տեսիլքն գանազան»:

Նշանակալից է այս նկարագրութեան աւարտը, որտեղ արտայայտուած է գրողի անկեղծ կարեկցանքը եւ հիացմունքը. «Վա՛յ դրստերացն քրակացոց որք յարկում արգելեալք՝ յակամայ եւ առ ահի բռնակալաց շունին յետ ինչ զի ծախել կարիցեն գորս եւ ունին: Այլ ընդ կախուս ոչ զարմացայ այնքան՝ քան թէ յափշտակութիւնք պատէ զիս յորժամ գմտաւ ածեմ եւ գառտնին պարս արհեստից նոցա, թէ քանի՛ցս գերագոյն հանճարով իցէ: Քանզի թէ պարք ժողովոց նոցին ի սոյն հանդիսի այսքան նոխազարդութեամբ տեսանիր՝ քանի՛ցս թէ գանխարար արհեստքն վայելչագարդք եւ գգուանք գրկանացն զարմանալի յերեւի յաչս սոփեստից: Ջի թէ կանաչութիւն բուրաստանին ի հեռուստ գրօնցոյց քմբցոյց այսքան՝ քանի՛ցս թէ յորժամ արձակիցեն զհոտս իւրեանց բուրմամբ անուշից՝ գմայլեցուցանեն. թէ արտաբուստ ազդեալ ջերմութիւնք գմեղ տապացուցանէր՝ քանի՛ցս սառն սիրով նիւթովք արհեստից շաղապատումն ընդ հոմանիս»:

Մենք դիտաւորեալ այսքան մէջբերումներ կատարեցինք Քէօմիւրճեանի այս փոքրիկ ուղեգրական հատուածից, նկատի ունենալով նրա կարեւորութիւնը ժամանակի հայ յուշագրական, գեղարուեստական արձակի գնահատման տեսակէտից: Ի դէպ, որոշ յուզիչ եւ պատկերաւոր հատուածներ կան նաեւ Քէօմիւրճեանի նամակներում: Սակայն նրա յուշագրական, գեղարուեստական արձակի ամենանշանաւոր երկը նրա Օրագրութիւնն է, որին կ'անդրադառնանք մի փոքր աւելի ուշ:

Այժմ դիտարկենք Ջարթօնքի շրջանի եւ առհասարակ հայ ուղեգրութեան պատմական ու գեղարուեստական առումով ամենէն արժէքաւոր երկը, որ ստեղծել է Սիմէոն Լեհացին⁽⁵⁾:

Սիմէոն Լեհացին (Չամոսցացի, Միկոլայովիչ. 1584-1637) ծնուել է լեհական Չամոսցա քաղաքում: Աշակերտել է Յակոբ Թոխաթցուն, եւ ստացել դպրի աստիճան: Երազելով լինել քրիստոնէական սրբավայրերում, 1608-1619 թուականներին ճանապարհորդել է, եղել է Փոքր Ասիայում, Արեւմտեան Եւրոպայում, Հայաստանում, Մերձաւոր Արեւելքում եւ Հիւսիսային Աֆրիկայում: Այնուհետեւ հաստատուել է հայաշատ Լվովում՝ տեղի դպրատանը զբաղուելով մանկավարժութեամբ: Զբաղուել է նաեւ գրական աշխատանքներով, գրչութեամբ եւ գրահաւաքչութեամբ:

Օժտուած լինելով գրական շնորհքով, Սիմէոն Լեհացին բաւական հետաքրքիր մանրամասներով եւ պարզ ու հասկանալի լեզուով գրել է իր բազմամեայ ուղեւորութիւնների պատմութիւնը: Նա իր տպաւորութիւնները շարադրել է անմիջապէս ճանապարհորդութեան ընթացքին, «երբեմն ի կէմին, երբեմն ի վերայ գրաստի, երբեմն իջեւանս եւ խաներն նստեալ»: Այնուհետեւ դրանք միաւորել ու խմբագրել է՝ ստեղծելով մի մեծարժէք երկ, որը չի գիջում ժամանակի եւրոպական ուղեգրութիւններին:

Ուխտաւոր ուղեգիրը չի սահմանափակուել սոսկ սրբավայրերի, վանքերի ու եկեղեցիների նկարագրութեամբ, այլ ներկայացրել է իր այցելած երկրների լայն համապատկերը, դրանց բնորոշ բնակչիմայական պայմանները, բնակչութեան էթնիկական յատկանիշները, նիստն ու կացը, սովորոյթները, տնտեսական կեանքը, նշանակալից ճարտարապետական յուշարձանները, կերպարուեստի կոթողները եւ այլն: Ըստ այսմ՝ Լեհացու երկն ունի բաւական մեծ պատմաճանաչողական արժէք, եւ ուղեգիր հեղինակն էլ նպատակ է ունեցել աշխարհաճանաչողութեամբ լայնացնել իր հայրենակիցների մտահորիզոնը: Եւ որպէսզի իր խօսքը հասկանալի լինի լայն հանրութեանը՝ նա ձգտել է լեզուաոճական մատչելիութեան եւ դիւրմբունելիութեան: Նա գիտակցաբար խուսափել է երկարաբանութիւններից՝ ընթերցողի միտքը զգաստ պահելու եւ չյոգնեցնելու համար: Մի քանի տեղ հանդիպում ենք նման արտայայտութիւնների. «Ոչ կարեմ մի բւտ միօքէ պատմել կամ գրել, զի մի՛ ձանձրացեալ նիրհեցէ՛, զի բազմութիւն խօսից տաղտկութիւն տայ լսելիաց»: Սա հեղինակի գրական ճաշակի եւ շփի զգացման վկայութիւնն է, յատկանիշ՝ որ արտայայտուել է նաեւ այլ պարագաներում: Այսպէս, խօսելով եզրիպտական արարների անմաքուր կենցաղի մասին՝ նա իրեն թոյլ

չի տուել նկարագրել, այսպէս ասած, հակագեղագիտական մանրամասներ, եւ դիմելով ընթերցողին՝ նշել է որ այդ ամէնի մասին «ոչ արժանի համարիմ գրել եւ զունկն ձեր յստակ պղծել»:

Իր խօսքը գրաւիչ ու հետաքրքիր դարձնելու նպատակով ուղեգիրը այս կամ այն առիթով երբեմն պատմում է որոշ աւանդութիւններ, զրոյցներ ու տեսիլքներ: Պատկերաւորման եւ արտայայտչական զանազան միջոցներով նա գծագրում է Արեւելքի եւ Արեւմուտքի տարակերպ քաղաքների ու շէնքերի կենդանի պատկերներ: Ահա Պոլսի կերպասեղէնի բազմահարուստ շուկան՝ (պեղեստան). «Աչք հազար պիտէր, որ տեսանէր եւ վայելէր զգեղեցկութիւն կուսմաշից եւ գանձուց, ոսկոյն եւ արծրթին եւ մեծագին դիպակնուն, ազգ եւ ազգ սուլահնուն, անգին վահանից եւ պողովատ քրից, ակամբ ընդելուզած խանչարնին, ազնիւ աղեղանց, զուտր ոսկով կամ նօհար կոթով դանըկնուն, բող գտէրատրքն՝ աթլագն, մախմուրն, քեամխան, խուրճանիքն, ազգի ազգի այսնա դափդանի, սօֆեր, եաղմուրլուխնին, խըլմաթի բարեր, մեծամեծ մարգարիտք, ակունք պատուականք եւ այլ բազում անտես եւ անգիտ դօհվանի, որ յաշխարհս ոչ գտանի, անդ լի եւ առատ գտանի եւ ծախի... Այլ եւ գմբուխտք լալ հաւկրաչափ եւ յվմատ գէֆիրնի, գաւաթնի, եւ չի գիտէ մարդ գո՛րն գնէ կամ յո՛րն հայի»:

Լեհացին մանրամասն նկարագրում է նաեւ Պոլսի եկեղեցիները, յատկապէս նշանաւոր Սուրբ Սոփիայի տաճարը, որտեղ զարմանքով ու հիացմունքով տեսել է «բազում զարմանալի սիւնս մեծամեծս, զանազան մարմարիոնեայ երկայնս եւ միջակս, ազգի ազգի ստուար եւ նուրբ, գեղեցիկ ի տեսութիւն աչաց. ոմն կարմիր, ոմն սպիտակ իրրեւ գօին, ոմն լուրջ եւ ոմն կանաչ, ոմն սեւ եւ ոմն ծիրանի. եւ զփորուածքն լցեալ ոսկով եւ լանվարդով: Զի աչք հազար պիտի, որ հայի եւ վայելէ գեղեցկութիւն արուեստին»:

Հեղինակն իր նկարագրութիւններին սովորաբար ներհիւստում է իր վերաբերմունքը, որ արտայայտուում է մերթ խորհրդածութեամբ, մերթ աղերսանք-աղօթքով, մերթ գովերգութեամբ, մերթ դառը ողբով եւ աւաղումով: Դրա շնորհիւ նրա խօսքը դառնում է առաւել ազդեցիկ ու տպաւորիչ՝ բացայայտելով հեղինակի ներաշխարհը: Սուրբ Սոփիայի գեղեցկութիւնն ու շքեղութիւնը պատկերող յուշագիրը, որ միջնադարեան բարոյականութեամբ դաստիարակուած բարեպաշտ քրիստոնեայ է, անկարող է անտարբել մնալ, որ այդ քրիստոնէական հրաշալի տաճարը մուսուլման թուրքերի պիղծ ձեռքերի մէջ է, ուստի եւ տաճարի նկարագրութեանն անմիջապէս յաջորդում է հետեւեալ տողը. «Բայց վա՛յ եւ եղո՛ւկ մեղսամակարք

բշուառ անձին իմոյ. զի վասն անարժանութեան քրիստոնէից եւ մեղաց մատնեաց Աստուած զսրբութիւնս իւր ի ձեռս աշխարհաց»:

Պոլսում Սիմէոն Լեհացին այցելում է մէկ այլ «փառաւոր եւ գործաշէն» եկեղեցի, որը թուրքերը «գազանաց տուն» էին դարձրել եւ կոչել Աւլանխանա: Տեսնելով այդ՝ ուղեգիրը «յարտասուս հարեալ» դիմել է Աստծուն, ասես յանդիմանելով նրան. «Տէ՛ր իմ, ընդէ՞ր մտին հեքանոսի ի ժառանկութիւն քո, եւ պղծեցին տաճար սուրբ քո: Ընդէ՞ր քակեցեր գցանկ սորա, եւ հայիոյնն զսա անցաւորք: Ապականեցին զդա խոզի եւ երէք վայրիք. եւ պատառոզ գազանք աբաժին եւ կերակրին ի սմա: Եւ զսեղանս քո կործանեցին եւ մեք եղաք ծաղր եւ ալան կատականաց, այլիւ նախատինք դրացեաց մերոց. եւ ոչ ոք է, որ պատուէ կամ նորոգէ զսա»: Ապա ողբալով ու աղաչելով՝ ասես վրէժի է կոչում. «Տէ՛ր Աստուած զօրութեանց, դարձ հայեաց եւ տե՛ս, ա՛յց արա ալգոյս ալսիկ եւ դարման. զի սա է հարսն քո եւ մայր մեր, զոր պսակեցեր պատուական արեամք քո սրբով. եւ փառօք զարդարեալ պնեցեր եւ տուն աղօթից կոչեցեր: Եւ ընդէ՞ր ես ոչ կորայ կամ մեռայ, քան թէ տեսի ալսպիսի աղէտ դառն կսկծանաց աչօք իմովք: Վա՛յ ինձ, վա՛յ ինձ. զիա՞րդ ալժամ անարգեալ եւ դարձեալ յանօրինաց է. եւ դու զիա՞րդ լոնս եւ համբերես»:

Նման ողբախառն հատուածները հեղինակն, ըստ պատշաճի, շարադրել է զբարբար եւ բարձր ոճով, հետեւելով միջնադարեան մատենագիրներին (ուղեգրութեան մէջ յիշատակուած են Յովհան Օձնեցու, Միքայէլ Ասորու, Թովմա Մեծոփեցու անունները): Յիբաւի, Սիմէոն Լեհացին, ինչպէս ինքն էլ վկայել է, հիմնաւոր կրթութիւն է ստացել, սովորելով «ի վարժարանս ջահաստանի առ ոտս վարդապետաց եւ բանասիրաց»: Սակայն վերադառնանք Պոլսի նկարագրութեանը:

Ներկայացնելով Պոլսի հարուստ վաճառատներն ու շուկաները՝ յուշագրի հիացմունքն ու զարմանքը վերստին տեղի է տալիս վրչտին ու դառնութեանը, երբ տեսնում է գերեզմարուած քրիստոնեաներին անողորմ առուծախը: «Եւ ես, — գրում է նա, — տեսայ զայս ամենայն աղէտս ցաւագինս, զոր բնաւ չէի տեսեալ, ցաւաց զլուի իմ, դողաց սիրտ իմ, խոռովեցաւ անձն իմ եւ ամենայն ոսկերէք իմ սասանեցան. . . ո՛հ, ո՛հ եւ եղո՛ւկ տառապելոյս. լաւ էր թէ չէի ծնեալ կամ թէ չէի եկեալ աստ, քան թէ տեսի ես զայսպիսի աղիողորմ խեղճս աչօք իմովք»: Եւ նորից դիմում է նա Աստծուն, այս անգամ աւելի զայրագին. «Միևչեւ յե՞րբ մոռանաս զմեզ ի սպառ եւ միևչեւ յե՞րբ դարձուցանես զերեսս քո ի մեմչ. ընդէ՞ր մատնեցեր զմեզ ի ձեռս բշմամեաց հեքանոսաց, անօրինաց, իստաց եւ ապստամբողաց»:

Թուրքիայից անցնելով Եւրոպա (Իտալիա), Սիմէոն Լեւոնցին րանտից ազատուածի թեթեւութեամբ ու ներքին հրճուանքով է նկարագրում իր այցելած առաջին քրիստոնէական կենտրոնը՝ Սպալատո բերդաքաղաքը, ուր կային «փառաւոր եկեղեցիս եւ բարձր գանկակատունս վիմաշէն, այլ եւ մեծամեծ գանկակս, որ ի հնչիւն զուարեանային հոգիք ի քաղցր եւ համեղ ձայնէն. եւ խաչեր մեծամեծ ի վերայ եկեղեցեաց եւ գանկակատնից՝ ոսկէջրած: Եւ անդ այլ ոչ երեւէր տանիկ կամ հրաման թուրքաց, այլ բովանդակ քրիստոնէութիւն էր»: Ահա եւ բացուում է նրա առջեւ շքնաղ Վենետիկը, որը մեր ուղեգրի բնորոշմամբ, «էր քաղաքս յոյժ գարմանալի եւ ամենայն մարդկան սեանչիլի, զի ոչ կղզի է եւ ոչ ծով կամ ցամաք, այլ ի մէջ ձծովու որպէս արձանն Հերակլիայ, շինեալ քաղմածախ եւ մեծամեծ ամուր հիմամբ»:

Ի դէպ, նոյն այս ժամանակ Վենետիկում է գտնուել նաեւ մէկ այլ հայ ուղեգիր՝ Խաչատուր Թոթաթեցին: Այս երկու տարագիր հայերը, ինչպէս նկատել է Կ. Մէլիք-Օհանջանեանը, «միեւնոյն տեսադաշտից են դիտել եւ նկարագրել Վենետիկը իր տեսարժան յուշարձաններով եւ նիստ ու կացով»⁽⁶⁾:

Սիմէոն Լեւոնցին էլ Արեւմուտքի քաղաքակրթութեան, վարք ու բարքի ջատագով է եղել, հակադրելով այն մուսուլմանական աշխարհի բարբարոսական կեանքին ու բարքերին:

Սիմէոն Լեւոնցին էլ իր այցելած երկրները դիտել է ոչ թէ սոսկ քրիստոնեայի, այլեւ, եւ առաջին հերթին, հայի աչքերով ու սրտով, ամէնուրեք փնտռելով իր աշխարհասփիւռ հայրենակիցներին, քանզի, ինչպէս գրում է նա, «թէ հաշուես ի Պուղտանայ մինչեւ Ստամպոլ, պուքուն Ուտումէլին մինչեւ մեծն Վանատիկ, նա չկայ քաղաք, գեղ կամ չֆոյիկ, որ հայ չկենայ. որ վասն ծովացեալ մեղաց մերոց ցիրուցան եղեալ եմք ի վերայ երկրի որպէս գիտչի»:

Յիշատակելի են Սիմէոն Լեւոնցու Ուղեգրութեան առաջին ուսումնասիրողի եւ հրատարակչի՝ Ներսէս Ակինեանի հետեւեալ խօսքերը. «Ժամանակը, երբ իւր ուղեւորութիւնը կը կատարէր Սիմէոն, հայ գաղթական կեանքի պատմական մէկ բուռն էր. մայր երկիրը Լքած՝ օտար երկնքի տակ իւր հանգիստը կը փնտռէ հայ ժողովուրդը. նոր գաղթավայրեր կը հաստատուին ամէնուրեք: Յատկապէս այս տեսակէտով կը ստանան ուղեւորիս հազորդագրութիւնները կարեւորութիւն»⁽⁷⁾:

Սիմէոն Լեւոնցու երկը ծայրեծայր համակուած է հայրենասիրական ջերմ շնչով: Միշտ եւ ամէնուրեք մեր առջեւ է իր ժողովրդի եւ հայրենիքի ցաւերով տառապող հայրենասէր հայը: Ահա նա նկար-

բազրում է Վենետիկի նշանաւոր Սուրբ Մարկոս եկեղեցին: Որպէս քրիստոնեայ, նա գոհանում ու փառաւորում է այդ կառոյցի ճոխութեամբ ու շքեղութեամբ, բայց որպէս հայ տրտմում է ու ցաւում, մտածելով՝ «Իսկ մեք վշտալի կենեօք յայսմ ամենայնէ գրկեալ եւ գերի եղեալ այլազգաց եւ տանկաց վասն մեղաց մերոց»: Մէկ այլ տեղ էլ արցունքն աչքերին արձանագրել է. «Ամէն ազգ անեն եւ բազմանան, իսկ մեք ջնջիմք եւ նուազիմք. վա՛յ ինձ»:

Ուղեգրութեան հեղինակը Զարթօնքի շրջանի հայ մարդն է, որը համակուած է իր ժողովրդի լուսաւորութեան եւ ազատագրութեան տենչերով: Ուստի եւ նրան առաւելապէս գրաւել են եւրոպական լուսաւորութիւնը, կրթական համակարգն ու համատարած գրադիտութիւնը: Նա մեծ հիացմունքով է արձանագրել, որ Իտալիայում «ամենեքեան իմաստունքն են, կարգաւորք եւ աշխարհականք, նաեւ շինականքն եւ ուսումնասէրք. զի աստուածարանք, իմաստասէրք եւ երաժիշտք, երկրաչափք եւ աստեղագէտք առ նոսա գտանին. եւ տասն տարեմ տղան տասն քիւր դրամի հաշիւն եւ համարն ի մի ժամն կարէ տալ բախամով»: Մինչդեռ մեր ազգը, ցաւով նկատում է յուշագիրքը, տգիտացել է եւ «քնաւ չունի սէր ուսման»: Այդ իսկ պատճառով՝ «նուագեալ պակասեցան եւ ջնջեցան կարգաւորք եւ իմաստունք յազգս մեր. եւ որք կան այժմս ամաչեմ կարգաւոր կոչել զնոսա»: Ի դէպ՝ այդ կարգաւորներին Սիմէոն Լեհացին խստորէն դատափետել է իր մէկ այլ երկում՝ Վիպասանութիւն Նիկոլայական պոեմում: Այդտեղ հեղինակը հայութեան վերահաս աղէտների հիմնական պատճառը համարել է անմիաբանութիւնը: Ուղեգրութեան մէջ էլ Լեհացին արձարծել է նոյն գաղափարը: Մի առիթով, յիշելով հայկական հին պետութիւնները, նա հայ պետականութեան անկման պատճառը համարել է աշխարհիկ տէրերի կողմից հոգեւորականութեան հանդէպ թշնամական վերաբերմունքը: Այսինքն՝ ժողովրդի ղեկավար ուժերի մէջ բացակայել են սէրն ու միաբանութիւնը: Եւ յուշագիրքը հանգել է այն մտքին, թէ «սէրն է գլուխ օրինաց եւ պատուիրանաց. եւ հազար երանի ազգին, որ սէր ունի»:

Սիմէոն Լեհացու հայրենասիրական զգացումները, բնականաբար, առաւել բուռն արտայայտութիւն են գտել Ուղեգրութեան այն հատուածներում, ուր նկարագրում են նրա շրջադայութիւնները Մեծ Հայքի տարածքներում: Ահա նա հասնում է իր ամենաբաղձալի ուխտավայրը՝ Մշոյ Սուրբ Կարապետի վանքը: Նա ծունկի է գալիս եւ գետնատարած՝ «ի վերայ երեսաց» աղօթում ազգային այդ խոշոր սրբավայրի առաջ: Այնուհետեւ նկարագրում է «մեծ եւ փառաւոր վիմաշէն կամարակապ... երկու զմպէթով» այդ եկեղեցին, որի

բարձունքից «կերեւէր լեռն Վանայ եւ Բաղէշ եւ միւս կողմն Եփրատ գետ եւ Մուշ քաղաքն»: Այս հայրենի սրտառուչ բնապատկերից նա հեռացել է «յարտասուս հարեալ»...

Լեհացին, սակայն, ոչ միայն դառնօրէն ողբացել է տարաբախտ հայրենիքի վշտերն ու ցաւերը, այլեւ աղգային արժանապատուութեան զգացումով հպարտացել իր ժողովրդի արժանիքներով, ստեղծարար բազկով եւ ուսումնասէր մտքով: Ահա նա մօտենում է Ամիգ-Տիգրանակերտին: «Երեւեցաւ ազնիւ եւ պատուական պարիսպն Տիգրանաշէն, որ է աթոռ եւ քախտ հայրապետացն Հայոց եւ քազաւորաց. եւ այժմ եւս աթոռ հայրապետաց եւ դասասաց վարդապետաց. զի միշտ անպակաս անտի ելանեն ուսումնասէր եւ իմաստուն եպիսկոպոսք, վարդապետք, երաժիշտ վարպետք, ընտիր քահանայք, այլ եւ դպիրք եւ դպրատունք»:

Տիգրանեան Հայաստանը հեռաւոր յուշ չէր նաեւ 17րդ դարի հայ մարդու համար, որը զգում էր իրեն որպէս մեծ ժողովրդի ներկայացուցիչ, որի գիտակցութեան մէջ անքակտելիօրէն յարատեւում էր միասնական Հայաստանը իբրեւ հոգեւոր հայրենիք...

Լեհացին Ուղեգրութեան մէջ երբեմն անդրադարձել է նաեւ իր անձնական հոգսերին ու ցաւերին, թղթին յանձնելով իր անկեղծ ու անմիջական ապրումները: Այսպէս՝ օտարութեան մէջ նրան է հասնում իրեն մայրութիւն արած իր աւագ քրոջ մահուան բոթը, եւ այդ ծանր հարուածից, ինչպէս յուշագրում է նա, «խոռվեցաւ հոգի իմ, գալարեցան աղիք իմ, շփոթեցաւ անձն իմ, քարշամեցաւ գոյն երեսաց, մքացան աչք իմ, շիւարեցաւ միտքս, բեկաւ մէջք իմ եւ անկայ երկիր»:

Այնուհետեւ նա շարադրում է իր սրտառուչ ողբը, ստեղծելով որոշ ինքնատիպ տողեր («դու էիր միշտ ի սենեակ սրտիս»): Երբեմն ուղեգիրը հեղել է իր մէջ կուտակուած կարօտը հայրենի տան եւ հարազատների հանդէպ՝ տխրօրէն լալով իր միայնակութիւնը: «Յոյժ տագնապէի, — գրում է նա, — յորժամ անկանէր ի միտս իմ գաւառս իմ եւ սիլաս... լայի եւ հառաչէի, ակն ունելով, բէ ոք տրտմեսցի. եւ ոչ ոք էր. այլ եւ մխիթարիչ ինձ ոչ ոք գտայ. վասն որոյ խորովէր սիրտս իմ: Գալարէին միտքս եւ նուաղէր յիս հոգի իմ»: Որոշ զէպօքերում յոյզը նրա մէջ հասել է այնպիսի չիկացման, որ հարկ է եղել արձակ խօսքը վերածել չափածոյի: Այսպէս օրինակ, Ուղեգրութեան չորրորդ հատուածում յուշագիր-բանաստեղծը պանդխտութեան հայրենիների հետեւողութեամբ գրել է.

Դարիպ քմ ու խիստ լալի,
այս օտար երկիրս որ եկի,
Զունիմ հայր, չունիմ եղբայր,
չունիմ ես ոչ մէկ սիրելի:

Մէկիկ բարեկամ պիտէր,
որ ապի տարտեքս այլանի,
Միթէ տեսնելով զնա,
սակաւ սիրտս մխիթարի:

Այսպիսով, ուրեմն, Միմէոն Լեհացու Ուղեգրութիւնը այդ ժանրի լուսագոյն նմոյշն է եւ ժամանակի գեղարուեստական գրական-նութեան բնորոշ երկերից մէկը: Նրանում լուսագոյնս արտացոլուել են Զարթօնքի շրջանի հայ մտաւորականի անձնական եւ անանձնական յոյզերն ու խոհերը, եւ հայրենասիրական, մարդասիրական զգացումներն ու գաղափարները:

2.

Միջնադարի հայ պատմագրութեան մէջ բաւական մեծ տեղ է գրաւում ինքնակենսագրական տարրը, որը ժամանակի ընթացքում վերածել է առանձին յուշագրական ժանրի: Առաջին ինքնակենսագրութիւնն արդէն ստեղծուած է է. դարում. ժամանակի խոշորագոյն գիտնական-մատենագրի՝ Անանիա Շիրակացու կողմից: Այդ երկը, սակայն, բացառիկ երեւոյթ էր միջնադարի համար եւ դարեր շարունակ նմանը չունեցաւ:

Ինքնակենսագրութեան երեւոյթը եւ անձնական կեանքի մտ-տիւնները առաւել մեծ տեղ են գրաւում ուշ միջնադարի հայ գրական-նութեան մէջ, երբ անձը աւելի ու աւելի շատ է սկսում տեսնել ու ար-ժէքաւորել իր դերը հանրութեան մէջ:

Զարթօնքի շրջանի պատմագրութեան եւ յատկապէս Գրիգոր Դարանաղցու ժամանակագրութեան մէջ զգալի տեղ են գրաւում ինք-նակենսագրական բնոյթի հատուածները: Դրանք, բնականաբար, ա-ռաւել յաճախադէպ են ուղեգրութիւնների մէջ, որոնք փաստօրէն կառուցուած են ինքնակենսագրութեան հիմքի վրայ: Տեսանք, որ Աւ-գուստինոս Բաջեցին իր Ուղեգրութիւնը շարագրել է որպէս սեփական վարք-ինքնակենսագրութիւն: Նման հիւսուածք ունի նաեւ Միմէոն Լեհացու Ուղեգրութիւնը: Այս երկի վերջում գտնում ենք մի գուտ ինքնակենսագրական հատուած, որը հրատարակիչը խորագրել է «Ինքնակենսագրութիւն Միմէոնի»: Սա Ուղեգրութեան ներածական հատուածի հետ միասին, ուր հեղինակը խօսում է իր մանկութեան ու պատանութեան մասին, փաստօրէն հանդիսանում է ուղեգրի ինք-նակենսագրութիւնը:

Պատմական եւ ուղեգրական ինքնակենսագրութիւնների հիմքի վրայ է առաջացել յուշագրութեան միւս ժանրը՝ օրագրութիւնը, որի

առաջին նմոշները ստեղծուել են ժէ. դարում: Յայտնի են Զաքարիա Ազուլեցու, Մինաս Ամզեցու եւ Երեմիա Քէօմիւրճեանի օրագրութիւնները:

Զաքարիա Ազուլեցին (1630-1691) եղել է վաճառական եւ պատանի հասակից առեւտրական գործերով շրջագայել է Պարսկաստանում, Թուրքիայում, Իտալիայում, Հոլանդիայում, Իսպանիայում եւ այլուր: Սկսած 1647-ից մինչեւ 1681 թուականը նա որոշ ընդհատումներով շարադրել է իր Դավտար-օրագիրը⁽⁸⁾:

Եթէ Գրիգոր Դարանաղցու երկը կարելի է համարել ժամանակագրութեան եւ օրագրութեան համադրութիւն՝ առաջինի գերակշռութեամբ, ապա Զաքարիա Ազուլեցու Դավտարը ներառում է թէ՛ ժամանակագրութիւնը, թէ՛ ուղեգրութիւնը եւ թէ՛ օրագրութիւնը: Սակայն այն իր ժանրային դիմագծով առաւելապէս օրագրութիւն է, քանի որ հիմնականում ընդգրկում է հեղինակի անձնական կեանքի դրուագներն ըստ օրերի: Ի դէպ՝ Դաւիթ քահանայ Եւզոկացու Ուղեգրութիւնն էլ (Պոլսից մինչեւ Հոմս), ուսումնասիրողի հաւաստմամբ, շարադրուած է «օրագրութեան մը սահմանին մէջ»⁽⁹⁾:

Զաքարիա Ազուլեցին իր առջեւ հետեւեալ խնդիրն է դրել. «Ուր որ գնամ կամիվ Աստուծոյ, թէ՛ գիւղ, թէ՛ քաղաք, թէ՛ աւեր ցանապարհ, ուր եւ հանդիպիցէ, գատիկ կամ վարդավառ կամ սուրբ խաչ կամ ջրաւրհնիք արարիցեմ կամ թէ ինչ գիւղ կամ քաղաք մտանիցեմ կամ թէ էլանիցեմ, գրեցեմ»: Ահա թէ որքան է նա կարեւորել իր անձնական գործունէութիւնը՝ յանձնելով այն թղթին, վստահ լինելով, որ իր գրածը «շահաւոր է իմացողի»: Եւ իսկապէս, նա յաւկապէս վաճառականների համար շատ շահեկան տեղեկութիւններ է հաղորդում: Զաքարիան «մանրապատում ճշդութեամբ» վերարտադրում է նաեւ Հայաստանի եւ իր այցելած երկրների անտեսական ու քաղաքական կեանքի պատկերը, լրացնելով պատմագիրներին ու ժամանակագիրներին: Առաւել մանրամասն նկարագրուած են հեղինակի եւ նրա ազգականների ընտանիքներում կատարուած անցուղարձերը:

Երբեմն Ազուլեցու օրագրական համառօտ արձանագրութիւններում, ինչպէս ձեռագրական յիշատակարաններում, բացայայտում է հեղինակի ապրումների ու խոհերի աշխարհը: Ահա մի օրինակ.

«ԹՎԻՆ ՌՃԻՁ [1677] տրէի գ [6], արամ իբ [22], յունվարի գ [6], օրն շաբաթ, ես Զաքարիայ այսօր ջրաւրհնիք Թարվեց արարի: Ամայ է [7] սրեաթ կէր չուրի լոյսն, որ սկսան ժամ ասելն: Առաւօտեան ժամն, պատարագն, ջուրաւրհնեմն ամէն արարին, ժամն արձակեցաւ, դեռ մին սրեաթ կեր չուրի լոյսն: Այս պատճառէս կանուխ արարին, որ թուրք չի գայ, եկեղեցին լցվին: Ամայ ախր կու գան, նար չկայ»:

Այս փոքրիկ հատուածն արտացոլում է թէ՛ այն ողջ ծանր կացութիւնը, որի մէջ էր կրօնական հալածանքների ենթարկուած հայութիւնը, եւ թէ՛ իր՝ հեղինակի հոգեկան տագնապները («Ամայ օխր կու գան, ճար չկայ»):

Ագոււեցին գրել է բարբառախառը լեզուով եւ պարզ ու անյաւակնոտ ոճով: Նրա երկն, ինչ խօսք, շունի գեղարուեստական մեծ արժէք, սակայն բաւական հետաքրքիր է որպէս ժամանակի մարդու, հայ վաճառականի մտքի ու զգացմունքի արգասիք: Ուստի եւ այն, Լէոյի խօսքերով ասած, «ոչ միայն աւելորդութիւն չէ մեր գրականութեան մէջ, այլ նրա համեստ, բնական ու անարուեստ զարդերից մէկն է կազմում, իբրեւ կեանքի աննման հարազատ վաւերագրերի մի հարուստ ժողովածու, որ եւ հենց այդ պատճառով կարդացւում է մեծ հետաքրքրութեամբ»⁽¹⁰⁾:

Երուսաղէմի Հայոց պատրիարք, նշանաւոր գրական եւ կրթական գործիչ Միքայ Ամղեցու (վախճ. 1704) Օրագրութիւնը մինչեւ օրս անտիպ է: Նրա համառօտ բովանդակութիւնը վերաշարադրել է Մ. Նշանեանը Երեմիա Քէօմիւրճեանի Օրագրութեան ներածականի մէջ, նշելով, որ այն «կը սկսի ՌՃԻԹ (1680) Հոկտեմբերի 8-ին ու կը հասնի մինչեւ ՌՃԾԳ (1704) յունիս 3... կը բովանդակէ 23 տարուան, 3 ամսուան եւ 27 օրուան առօրեայ արձանագրութիւններ կամ յուշագրութիւններ»⁽¹¹⁾: Այս երկը եւս ունի ուղեգրական եւ ժամանակագրական տարրեր:

Անխառն չէ նաեւ Երեմիա Զէլէպի Քէօմիւրճեանի Օրագրութիւնը: Այն ընդգրկում է հեղինակի կեանքի ժամանակագրութիւնը 1648-1662 թուականների միջեւ՝ միաժամանակ հաղորդելով կարեւոր տեղեկութիւններ Թուրքիայի ներքին կեանքի եւ յատկապէս արեւմտահայ գաղթաշխարհի ազգային-հասարակական ու եկեղեցական գործերի մասին: Այդ իսկ պատճառով հեղինակն ինքը իր երկը կոչել է ժամանակագիր եւ Պատմութիւն եւ նրա պարունակած պատմական նիւթի հիման վրայ յետագայում շարադրել իր Տարեգրական Պատմութիւնը: Սակայն Քէօմիւրճեանի խնդրոյ առարկայ երկն իսկական օրագրութիւն է, որտեղ հեղինակը իրեն դիտել է պատմական իրադարձութիւնների մթնոլորտում: Ահա մի փոքրիկ հատուած, ուր օրագրական նշումների ձեւով իրար կողքի արձանագրուած են մանր անձնական-կենցաղային իրողութիւններ եւ խոշոր իրադարձութիւններ:

«[ՌՃԲ (1653)] Օգոստոս ամիս օր Բշի [Երկուշաբթի]. երեկոյիս Խօնայ Սարգսի որդոյ Մարտիրոսի հարսնիքն գնացի ի Պալատ: «Գշի [Երեքշաբթի] օրս շարժ եղեւ:

«Ուրբաթ․ գկուռնի փաշան Բշեցին եւ գմեր էֆենտին մանգուլ արին ի Մարայ:

«Շաբաթ․ Պետրոսին աղջիկ մեռաւ:

«Է-ին [7-ին] օր Կիրակի․ երուսաղէմացիք եկին:

«Եւ Եշի [Հինգշաբթի]․ Աստուածատուր վարդապետն եկաւ ի յԱստուածածին, անդ գնացաք մօտ ի նա»:

Սահայն տեղեկութիւնները շատ ղէպքերում նման մանր արձանագրութիւններից վերածում են ընդարձակ պարբերութիւնների ու էջերի՝ ներառելով զանազան մանրամասներ, նկարագրութիւններ, վիպական ու վկայարանական երանգ ստացած պատմութիւններ: Դրանց շնորհիւ Երեմիայի երկը դառնում է առաւել հետաքրքիր, երբեմն էլ, սահայն, տառապում է երկարարանութեամբ: Վիպական պատումով եւ կենդանի երկխօսութիւններով են պատկերուած յատկապէս եկեղեցականների վէճերն ու ընդհարումները: Համակողմանիօրէն բնութագրուած են մի շարք եկեղեցական, հասարակական գործիչներ, յատկապէս Եղիազար Այնթափցին եւ Մարտիրոս Ղրիմեցին:

Քէօմիւրճեանը, ինչպէս տեսել ենք արդէն, գեղարուեստական նկարագրութիւնների վարպետ է: Օրագրութեան մէջ էլ առկայ են նման պատկերներ: Ահա Պոլսում պատահած ահեղ մրրիկի նկարագրութիւնը․ «Հնչեաց հողմ մի յոյժ սաստիկ, զի գտանիսն յիրար ածեալ եւ զփրէմիսս նմին կտոր կտոր ի վայր վայրէր եւ զխանի տանեաց զարնինն ի մի կողմն ծալէր եւ զձառոցս զպտուղսն ողջամբ հարեալ ի վայր հոսէր եւ զճիւղսն կոտրատեալ ի քաց հանէր եւ զծովու ալիսն մինչ ի պարիսպն հասուցանէր եւ ի ներսս հեղոյր եւ զփոշիս եւ զհոդս գետնի պտուտ տալով բարձրացուցանէր յերկինս եւ զճառագայթս արեգականն արգիւոյր, որ եւ զշունչս երթեւեկացս արգել»:

Նման նկարագրութիւններն աւելի տպաւորիչ են դառնում, երբ յուշագիրը, որպէս աղէտների ականատես վկայ, դրանց ներհասում է իր անձնական յոյզերն ու տագնապները: Ահա նա ինքը փոքրիկ նաւի մէջ փոթորկոտ անսահման ծովում․ «Եւ ի նսեմանայ երեկոյին եղեւ մրրիկ հողմոյ մեծ եւ տատանեալ մեծ կոծով եւ երկիւղիւ ի մէջ փոքր նաւին, որ ահազնատեսիլ ունէր անհուն ծովն, միայն զինք ցուցանելով իբրեւ զլերինս ի վերայ մեր, մերք ի վերայ իւր առնելով բարձրանայալ եւ մերք յանդունդ կարծեալ գմեզ գոլ»:

Ահա եւ մէկ այլ համանման պատկեր․ «Եւ կացեալ զգիշերն ի բուն անդէն, առաւօտեան պահու հանդարտ հողմով երեքեալ ծփայալ ի մէջ ծովուն եւ ի ջերմութենէ արփոյն խորշակահար տոբոյն շունչմ մեր նուաղէին եւ նեղէին ի ծարաւոյ, եւ էինք անկեալք իբր զկոնդ մի ի գետնի»:

Ինչպէս իր քնարերգութեան՝ այնպէս էլ իր յուշագրութեան մէջ Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեանը ելնում է մեր դէմ որպէս Զարթօնքի շրջանի ուսումնասէր եւ հայրենասէր մտաւորական՝ տոգորուած ժողովրդի լուսաւորութեան եւ ազատագրութեան գաղափարներով:

Խստօրէն քննադատելով ազգի հոգեւոր եւ ֆիզիքական ուժերը ջլատող ու շահատակող հոգեւոր ու աշխարհիկ տէրերին՝ Քէօմիւրճեանն ըստ ամենայնի գովերգում է ժողովրդի բարօրութեանը ծառայող անձանց՝ դիտելով նրանց որպէս ազգային գործչի տիպար: Օրագրութեան մէջ այդպէս է բնութագրուած, օրինակ, պոլսահայ գաղութի նշանաւոր դէմքերից մէկը՝ Մահտեսի Ամբակումը, որը եղել է իր՝ Երեմիայի խնամակալը. «...սիրեցեալ լինէր զկարգաւորս եւ տայր յամենայն ընչիցն քաժին Աստուծոյ, պատուէր զճնոզս, հարկէր զազգատոհմս, գթայր ի վրայ որրոց, խնամս տանէր այրեաց, զբանտարգեալս ազատէր, զանկարիսն ի կար ածէր՝ յոյր ձեռն հասանէր, զմերկս զգեցուցանէր, զհաղցեալսն կերակրէր, զմոլորս խրատէր, զստահակս եւ զանհոգս տիրապետէր եւ ի գործի կացուցանէր, դրամի տէր առնէր եւ ի տեղիս մարդկան կացուցանէր, զաշակերտս գործոյն՝ պետս յօրինէր, շանայր ստիպէր ի քաց կալ ի հպարտութենէ եւ յարբեցութենէ, զձերս պատուել եւ յեկեղեցիս կանխել»:

Եղիշէի ոսկեղենիկ լեզուի եւ հայրենասիրական ոգու կնիքը կայ այն հատուածի վրայ՝ ուր պատկերուած է հայ կանանց բողոքի ցոյցն ընդդէմ հայկական եկեղեցիներն աւերող թուրքերի: «Եւ այլոց կանանց ոմանց վառեալ արութեամբ ի քաց դնելով զերկիւղ, երթալ առ բռնակալօքն պար առեալ, կացորդս յօրինեալ, զգլուխս շարժելով, բեւատարածելով բողոքս բարձեալ, նոր ողբս երգելով, զանիրաւութենէ նոցին հոշակս հանեալ եւ զթշուառութեանց մերոց նիչս եւ բողոքս վերամբարձեալ կողկողէին, մինչ զի եւ զհակողացն ձեռն բուլացուցեալ՝ ի նոյնս գարմացեալ պշնելով եւ բռնակալացն սիրտ մմլեալ, յարտասուս հարեալ ի մեծ իմն եւ ի նորոգ խղնէ նոցին թողէին անդրէն եւ յետս դառնային»:

Շատ տպաւորիչ է նաեւ շարունակութիւնը, ուր Հայոց տապալուող տաճարների համար ալեկոծուած ողբում է նաեւ ողջ բնութիւնը: «Յայնժամ եւ սուգ առնոյր երկին եւ ողբայր երկիր վասն դիպուածոց մերում թշուառութեանս, զի ի նոյն ժամու յորում էանդէին տանաբ՛ լինէր որոտ ահագին եւ մթագին եւ արեւ ծածկեցաւ եւ հողմս սաստկագին յոյժ մինչեւ ամենայն սեռից միանգամայն յարտասուս հարեալ՝ զաղաղակս իւրեանց յերկինս տարածէին ընդ հողմոյն եւ փոշոյն, որ բարձրանայր յերկրէ, եւ ծովն ալբօքն փրփրայր եւ բարձրանայր ընդ պարիսպն եւ անձրեւ գայր»:

Ինչպէս Սիմէոն Լեհացին, Երեմիա Քէօմիւրճեանն էլ Օրագրութեան մէջ երբեմն խօսքն ընդմիջարկել է հայրենասիրական զեղումներով: Այսպէս, հայերի հետ պատահած մի դժբախտ դէպքի առիթով նա աղօթել է Աստուծոն եւ աղաչել «Ի չարագոյն պատժոց» փրկել «զամենայն հաւատացեալս անուան իւրոյ, մանաւանդ զԱրմէնագինս եւ զուղղափառ Լուսաւորչադաւանս՝ պահելով զօրէնս սուրբս եւ յուհս Լուսաւորչին մերոյ»:

Երեմիա Քէօմիւրճեանի Օրագրութիւնը Սիմէոն Լեհացու Ուղեգրութեան հետ միասին Ժէ. դարի յուշագրութեան լուսագոյն նըմոյշն է, ուր քաղաքական-հասարակական կեանքի ոլորտում ներկայացուած է ժամանակի հայ մարդը, մտաւորականն ու հայրենասէրը՝ իր խոհերով ու ապրումներով:

3.

Նորանոր ուղեգրութիւններ, օրագրութիւններ եւ յուշագրական ընոյթի այլեւայլ երկեր են ստեղծուել նաեւ ԺԸ. դարում: Եթէ նախորդ հարիւրամեակում առաւել կենսունակ էր ուղեգրական ժանրը՝ ապա այժմ առաւել լայն տարածում են գտնում օրագրական-ինքնակենսագրական երկերը:

ԺԸ. դարի նշանաւոր ուղեգրութիւններից է Զուար Ճիլէրնի Օղլու⁽¹²⁾ քահանայի 1711-1712 թուականներին Պոլսից Երուսաղէմ կատարած ուխտագնացութեան նկարագրութիւնը⁽¹³⁾: Այս բաւական ծաւալուն երկը գրուած է «ոամկախօս լեզուով»՝ գրաբարի, աշխարհաբարի եւ թուրքերէնի որոշ խառնուրդով: Ըստ ուղեգրութեան հըրատարակչի՝ «այս խառնակ բայց անաշխատ լեզուն ալ իր ոճին պէս կրնայ զուարճութիւն մը տալ ընթերցողաց»: Յիրաւի, ուղեգրութեան հեղինակը, որը, դատելով գրուածքից, մի կիսագրագէտ քահանայ է, օժտուած է եղել մանրամասն եւ աշխոյժ պատմողի ունակութեամբ: Նա ընթերցողին որին եղբայր է կոչում՝ «ձեռքից բռնած» տանում է Երուսաղէմի սրբավայրերը, ցոյց տալիս նրանց դիրքը, ճարտարապետական կերտուածքը, նրանցում առկայ սրբութիւնները, նկարները, անօթները, պատմում նրանց հետ կապուած աւանդութիւններ, եւ նկարագրում ուխտաւորների ու տեղացիների վարքն ու բարքը: Ահա մի փոքրիկ ընորոշ հատուած. «Այսուհետեւ, եղբայր, բռնէ գեանապարհն ել ի վեր, շիտակ ճանապարհով գընամք ի Բեթանիա, ոմն ձիով, եւ շատն հետեւակ, ոմն կէնն ցաքկելով եւ ոմն ծեր գաւազանով, մինչեւ ի գերեզմանն Ղազարու, եւ առջեւն քաց տեղ

մի, եւ յետեւն գիւղն աւերակ է, եւ կայ նեղ ցանապարհ մի, մի կողմն քարձր՝ միւս կողմն ցած, սորայ մէջտեղն է գերեզմանին դուռն փոքրիկ . . . »:

Հայ քահանան, բնականաբար, առաւելապէս անդրադառնում է Երուսաղէմի հայկական վանքերին ու սրբատեղիներին՝ ամենայն ժանրամասնութեամբ նկարագրելով դրանք: Ըստ այդմ՝ նրա երկն ունի աւելի շատ տեղագրական բնոյթ:

ԺԼ. դարի սկզբին մի ոչ ծաւալուն ուղեգրութիւն է հեղինակել Աւետիք Պաղտասարեան Տիգրանակերտցին («Վասն որ կամի ի Հէպէշին երկիրն գնալ այսպէս է»), որը նրա եթովպիա կատարած ուղևորութեան համառոտ նկարագրութիւնն է⁽¹⁴⁾: Ի դէպ՝ Աւետիք Տիգրանակերտցին իր այս եւ միւս ճանապարհորդութիւնների ընթացքում, 1684–1719 թուականների միջև, բաւական նիւթեր է ժողովել թուաբանութեան, տոմարագիտութեան, աստղաբաշխութեան եւ գիտութեան այլ բնագաւառներից, կազմելով Տէֆտէր Դիրք խորագրով մի ժողովածու (անտիպ): Այստեղ իր կատարած ծանուցումներում նա թողել է նաեւ որոշ ինքնակենսագրական հատուածներ, անկեղծ ու սրտառուչ յիշատակագրութիւններ: Այսպէս, օրինակ, մի աստղաբաշխական աղիւսակի առնչութեամբ նա գրել է. «Շատ կեանք մաշեցի հետ այս արուեստիս՝ որ կայ ի գիրքըս գրեալ, եւ շատ նախատինք լսեցի որովայնամոլ եւ արքշիռ ուսումնատեաց եկեղեցականաց. եւ ի փառս Աստուծոյ համբերէի վշտաց եւ նեղութեանց. եւ լոնիւայն պարապեալ հետեւէի գրոց, եւ դեգերեալ մաշէի ի դրունս ուսուցիչ իմաստասիրաց, որ տեսանէին զջանն իմ հետ այս արուեստիս, եւ մխիթարեալ յորդորէին անձանձիր, եւ ուսուցանէին դաս տալով զոր ինչ խնդրէի: Վա՛յ ինձ տառապեալ Աւետիքիս, որ միշտ մտածեմ լալով, թէ, ո՛վ անձն իմ, մի՛ երթալ ի հետ ոմանց՝ արբեցութիւն եւ զեղխութիւն եւ դատարկաբանել վայրաբար. այլ լաւ պարապ գիտութիւն ուսանել՝ քան թէ նախանձելով զկեանս անցուցանել. կամ թէ՛ լաւ է շատ գէտ մեղաւոր՝ քան թէ անառակ արդար: Այլ զի յոյս ունիմ, որ Աստուած մեղաւորաց կու ողորմի»: Այս վերջին տողերում, ինչպէս տեսնում ենք, արտայայտուած է մի բոլորովին նոր հայեացք, որ առաւել բնորոշ է լուսաւորական դարաշրջանին: Ողջ միջնադարի ընթացքում հայ իրականութեան մէջ իշխում էր այն մտածողութիւնը, թէ «բարի գործը գերազանց է, քան գիտութիւնը»: «Այս գիծը յատուկ է հայ մտքին՝ Յ. Մանդակունիէն մինչեւ Խրիմեան Հայրիկ եւ բովանդակ հայ եկեղեցին», — գրում է Ն. Աղբալեանը՝ նոյն այդ գիծը գտնելով նաեւ ԺԼ. դարի աշուղ-բանաստեղծ Սայաթ-Նովայի աշխարհայեացքի մէջ⁽¹⁵⁾: Եւ ահա նոյն ժամանակաշրջանի ինքնուս գիտնականը՝ Աւետիք Տիգրանակերտ-

ցին՝ «այդ չժնադ աշխատաւորը, որ գիտութեան ծաղիկներ էր հաւաքում իր ժողովուրդը տգիտութեան խաւարի մէջ շթողնելու համար» (Լէօ), յայտնում է տրամագծօրէն հակառակ հայեցակէտ, առաջնութիւնը տալով գիտութեանը («չաւ է չատ գէտ մեղաւոր՝ քան թէ անառակ արդար»)։ Սակայն վերագառնանք ուղեգրութիւններին։

1790 թուականին Մխիթարեան միաբանութեան անդամ Յովհաննէս Թովմաեանը (Թովմաճանեան. 1717-1806) «հրամանաւ վեհին իւրոյ Աբրայի» շարադրում է իր բազում ուղեւորութիւնների հանգամանալի պատմութիւնը՝ 527 ձեռագիր էջից բաղկացած մի ինքնակենսագրութիւն⁽¹⁶⁾։ Գրքի առաջաբանում հեղինակը նշել է, որ ինքը, մինչեւ միաբանութեան մէջ մտնելը, որպէս վաճառական, չրջագայել է «գերիս մասն աշխարհիս՝ յԵւրոպիա, յԱսիա եւ յԱփրիկէ՝ զերեսուն ինքնիշխան պետութիւնս եւ զթագաւորութիւնս»։ Ընդ որում, իր այս ճամբորդութիւնների ընթացքում նա ունեցել է ամենարարժք մակարդակի հանդիպումներ եւ իր հատորի մէջ ամփոփել է մի շարք կարեւոր վաւերագրեր։

Դատելով տպագրուած հատուածներից՝ Թովմաճանի երկը գրուած է բաւական պարզ լեզուով, թեթեւ պատմով եւ հետաքրքիր մանրամասներով։ Ուշագրաւ է, որ հեղինակն իր մասին պատմում է երրորդ դէմքով, որոշ շափով ուրուագծելով իր իսկ կերպարը («Թովմաճան ոչ էր այնքան շոայլ եւ փոքր ծախս առնէր վասն իւր»)։ Ահա նա Ծրանսիայում է եւ հրաւիրւում է փառահեղ կառքով մեկնել առաջին մինիստր Դուքս Շուոլէլի պալատը. «Եւ Թովմաճանն արար զպատրաստութիւն իւր, եւ զգեցաւ զիւր փառաւոր զգեստն պարսից եւ մանիլու գտակ ի գլուխն պատուական շալով միով փաթութեալ, եւ էտո ընդ իւր զպարոն Աստուածատուրն եւ զմի սպասաւոր, եմուտ ի կառսն վէզիրին եւ զնաց ի պալատ նորս»։

Մեր այս ուղեգիրը, սակայն, առանձնապէս օժտուած չի եղել գեղեցիկ նկարագրութիւններ անելու ունակութեամբ. իր տեսած վայրերն ու իր տպաւորութիւնները նա պատկերել է անզարդ ու անմիջական։ Այսպէս, օրինակ, նա, ինչպէս մի ժամանակ իր հայրենակից Մահտեսի Շահմուրատը, զմայլուած կանգնել է Վերսալի առաջ եւ յետագայում արձանագրել է. «Ձայս ամենայն տեսեալ Թովմաճանի, յոյժ զմայլեցաւ առ այն մեծակառոյց եւ պերճապատում պալատն եւ զգեղեցկութիւն կարգի եւ համեմատութեան պարտիզացն, որ ոչ կարեմ գրով բացատրել ձեզ ասէր. եւ գոր ոչ ոք կարէ գրով բարեպէս իմանալ եւ պատկերակերպիլ, մինչեւ ոչ գնացեալ անձամբ տեսցէ գամենայն. վասն զի հիւանալի ինչ է այս Վերսալիա եւ արժանի տեսութեան ամենայն տեսութեանց եւ հանճարեղ անձանց. ահա այսքան

կարեւմ գովիլ»։ Ինչ խօսք, որ այսպիսի նկարագրութիւն-գովեստն էլ իւրովի ընթերցողի առջեւ «բացում է» Ֆրանսիական արքայական պալատի աննկարագրելի գեղեցկութիւնը։

Շարունակութեան մէջ ուղեգիրը բաւական կենդանի երկխօսութիւններով նկարագրում է իր հանդիպումը, զրոյցն ու հացկերոյթը Լուզովիկոս ԺՆ. Թագաւորի հետ։ Թովմաճանը վերջինիս ներկայացնում է մի նախապէս պատրաստուած դիմում, որից երեւում է, որ մեր ուղեգիրը Ֆրանսիայի միապետի մօտ է գնացել յատուկ քաղաքական առաքելութեամբ, ի նպաստ «մեր Հայոց ազգին»։ Այդ հանդիպումից յետոյ Ֆրանսիացի պալատականները ցանկանում են իմանալ, թէ ի՛նչ ազգի մարդ է Թովմաճանը եւ լսելով որ հայ է՝ սկըսում են ծաղրել՝ կարծելով թէ հայը մի նորելուկ ազգ է։ Այնժամ Թովմաճանը Արարատի եւ Նոյեան տապանի փաստարկումով ապացուցում է ներկաներին հայ ազգի հնութիւնը եւ արժանապատուօրէն աւարտում խօսքն այսպէս. «Արդ այժմ, ուրեմն, գիտացիր դու, ո՛վ գիտուն քրինչալէյ, եւ թողութիւն շնորհելով տես, որ Հայոց ազգն ի յոր ժամանակէն ցուցի, որ ի Հին Կտակարանս յիշատակի։ Իսկ քո ազգի անունն ի Հին Կտակարանս ոչ գոյ։ Տեսցու՛մ ուրեմն այժմ արդեօք մեր Հայոց ազգն իցէ՞ Երէկ եւ այսօր նոր ելեալ թէ՞ քո ազգն»։ Սա ազգային ինքնագիտակցութեան հասած հայ մարդն է, որն արդարացի հպարտութեամբ արտայայտոււմ է՝ այն էլ Ֆրանսիական արքունիքում, Ֆրանսիական «արսուլիտիզմ»ի օրօք, Ֆրանսիացի պալատականին ցոյց տալով իր ազգի առաւելութիւնը (հնութեան առումով) նրա ազգի նկատմամբ։ Եւ դա յարգանքի ու խրախուսանքի է արժանացել ոչ միայն պալատականների՝ այլեւ Ֆրանսիայի միապետի կողմից։ Յատկանշական է նաեւ այն, որ Ֆրանսիացի պալատականներից մէկ ուրիշը ծանօթ լինելով Հայոց պատմութեանը՝ Թովմաճանին տանում է Փարիզի Սէն Սէլէստէն եկեղեցին եւ ցոյց տալիս մի գերեզման, որ «էր Վեցերորդ Լեւոն եւ վերջին Թագաւորն Հայոց 1393 թուի Փրկչին»։ Իր երկի այս հատուածով Թովմաճանն, ըստ էութեան, փաստում է թէ՛ հայ ժողովրդի հնագոյն ծագումը եւ թէ՛ նրա անկախ Թագաւորութեան գոյութիւնը մինչեւ ԺԴ. դարի վերջը...

Եթէ Յովհաննէս Թովմաճանը վայելել է Ֆրանսիական արքունիքի բարեհաճութիւնը, ապա նրանից առաջ Աւետիք պատրիարք Թոխաթցին (Եւզոկիացի. 1657-1711) արժանացել է Ֆրանսիական բանտի՝ Բաստիլի տաժանակրութեանը։ Աւետիքը եղել է Սեպուհ լեւոն Կայիփոս (Կապոս) վանքի միաբան, ապա Երզնկայի Հայոց Առաջնորդ, այնուհետեւ՝ Երուսաղէմի եւ Պոլսի պատրիարք։ Անողորք պայքար է մղել կաթոլիկ եկեղեցու դէմ եւ հալածուելով վերջինիս կողմից՝ 1706 թուականին աքսորուել է, ապա ընկել Բաստիլ, ուր մնա-

ցել է մինչեւ 1710 թուականը: Այստեղ էլ նա գրել է իր ինքնակենսագրութիւնը, իր «ամենամեծ եւ ամենատարօրինակ եղանակութիւններով, փառաւոր բարձրացմամբ՝ ինչպէս նաեւ սարսափելի կործանմամբ նշանաւոր» (Էդ. Դիւլօրիէ) կեանքի պատմութիւնը⁽¹⁷⁾:

Աւետիք պատրիարքն, ըստ երեւոյթին, բաւարար կրթութիւն չի ստացել, ուստի եւ գրել է բարբառախառն գրաբարով, ամէն քայլափոխի մեղանշելով քերականական եւ ուղղագրական կանոնների դէմ: Այդ թերութիւնը, սակայն, ինչ որ տեղ վերածուել է առաւելութեան, որի շնորհիւ նրա «պատմուածքը դուրս է եկել շատ կենդանի ու հետաքրքրական» (Լէօ): Պարզ ու անպաճոյճ լեզուով եւ երբեմն սրտառու ձանրամասներով է յուշագրողը պատմել թուրքերի ձեռքին իր եւ իր հայրենակիցների կրած տառապանքների մասին: Բերենք մի փոքրիկ հատուած. «Եւ Երզնկու գաւառ առին Թուրքն ազգին յէնկիչէրիք. յոյժ եարամազ էին, քրիստոնէից գողայքն ափշտակեալ կու պղծէին եւ գկանայքն կու պղծէին, իրրեւ զՍոթում Գումեր եղեւ, եւ այլ եւ այլ աւագակութիւն առնէին, զվանքերն ու եկեղեցիք կողոպտէին, արքեալ ի գինւոյ զմարդիկ բազում սպանին եւ զիս ալ երկու տեղաց խանչարով խոցոտեցին, բազում արիւն հեղաւ, մինչ մէկ ժամ անշնչացայ, ողորմութեամբ Աստուծոյ կարողացայ, զօրացեալ զընացի ի վանքն, հիւանդ անկեալ կայի ի մահին մինչ խ (40) օր. յառողջացայ զնացի ի Կոստանդնուպոլիս Թուրքին մեծաւորին ծանուցի, բողոք բարձեալ խնդրեցի ի փրկութիւն ժողովրդեան ի ձեռաց ամբարշտաց. . . »:

Ճրանսական արքունիքի ու կաթողիկ եկեղեցու հարկադրանքով Պոլսի երբեմնի ահեղ պատրիարքը Բաստիլում շարադրելով իր ինքնակենսագրութիւնը՝ դառնօրէն մեղայ է գալիս՝ հրաժարուելով իր պատրիարքական աթոռից ու պայքարից:

Ուշադրութեան է արժանի նաեւ Եղիա Կարնեցու (Աստուածատուրեան, Մուշեղեան) ինքնակենսագրութիւնը, որի խորագիրն է. Պատմութիւն իմ կարեառօտ ի վերայ անձկութեանց Եղիայիս Աստուածատուրեան Մուշեղանց, զորս կրեցի ի ազգէն Ֆրանկաց, մանաւանդ ի խարեքայ կրօնաւորացն նոցա եւ ի սուտ եխպայրց եւ բարեկամ կոչեցելոց⁽¹⁸⁾:

Աւետիք Թոխաթցու նման Եղիա Կարնեցին էլ ապրել է բուռն ու արկածալից կեանքով, որը հարկ է համարել գրի առնել 1747-1749 թուականներին, շուրջ վաթսուց տարեկան հասակում: Ինչպէս գրում է Բ. Զուգասզեանը՝ «օժտուած լինելով վիպելու անժխտելի ձիրքով, Ե. Մուշեղեանը իր կեանքի ողիսականը շարադրել է աշխոյժ ու կենդանի լեզուով, համեմուած ժողովրդական բառ ու բանով, առականբով ու ասացուածքներով: Դէպքերի նկարագրութիւնները յաճախ

վերաճում են փոքրիկ զրոյցների ու ակնարկների, իսկ պատմական իրական գործող անձինք՝ ընդհանրացուած գեղարուեստական կերպարները»⁽¹⁹⁾։

Հայ ժողովրդի ազատագրութեան գործին նուիրուած Եղիա Մուշեղեանը՝ Իսրայէլ Օրիի համակիրը, իր յուշամատենում ազօթում է առ Աստուած՝ ուժ ու զօրութիւն տալ Պետրոս Թագաւորին, «որ յամենայն յաջողութեամբ գայ եւ ազատէ զմեր ազգն»։ Ըիշդ է նկատել Ա. Յովհաննիսեանը, որ Եղիա Մուշեղեանը «Պետրոս ձարից ակնկալում էր ոչ միայն հայերի ազատագրումը պարսից լծից՝ այլեւ նրանց պետական անկախութեան — «Թագաւորութեան» վերականգնումը»⁽²⁰⁾։

Ահա թէ ի՞նչ է գրում Հայ ժողովրդի ազատագրութեան համար իր կեանքը զոհելու պատրաստ Հայ գործիչը. «Եթէ Աստուած այժմոյս առաւէր վասն իմ հրեշտակ եւ ասէր ինձ թէ՛ տո՛ւր ինձ գոյ յանձն ի մահ վասն ազգին Բոյ, ես շնորհեմ Բո ազգին ազատութիւն եւ Թագաւորութիւն՝ առժամայն մատուցանեմ զանձն իմ»։

Յուշագրական մի ինքնատիպ երկ է Հեղինակել նաեւ Հայ ազգային ազատագրական շարժման մէկ այլ գործիչ՝ Պետրոս Դի Սարգիս Գիլյանեցը (զոհուած 1724թ.)⁽²¹⁾։ Պետրոսը եղել է ջուղայեցի վաճառական, ապա թողնելով առեւտրական գործերը՝ լիովին նուիրուել է Հայ ազատագրական պայքարին։ Նա է կազմել ու ղեկավարել Հայկական էսկադրոն կոչուած կամաւորական ստորաբաժանումը (1723 թ.), որը գործել է կասպիական ծովեզերքը գրաւած ռուսական բանակի կազմում։ Գիլյանեցը հիմնականում գտնուել է Ռեշտ քաղաքում որտեղից Հայ վաճառականների միջոցով լուրեր է հաւաքել եւ ճշդելով ու մշակելով՝ առաքել է Հայ ազգային ազատագրական շարժման գործիչ Մինաս վարդապետ Տիգրանեանին եւ ռուսական հրամանատարութեանը։ 1722 թուականի Յուլիսի 31-ից մինչեւ 1723 թուականի Օգոստոսի 22-ը ընդգրկող եւ 133 միաւոր կազմող այդ զեկուցագրերը ամբողջութեան մէջ, ըստ էութեան, ներկայացնում են մի «քաղաքական օրագրութիւն», որը կարելի է համարել նաեւ «թուղթ-ժամանակագրութիւն»։ Այն ճշգրիտ տեղեկութիւններ է հաղորդում ամֆղանական արշաւանքների, նոր Զուղայի աւերման, ըՍ-պահանի գրաւման, այլեւ Պարսկաստանի ներքին կեանքի վերաբերեալ։ Երկի հրատարակիչ Յ. Փոնդոյեանցի ընտրումամբ. «Դի Սարգիս Գիլյանեցի օրագիրը կարդալով՝ կարծում ես, որ կարդում ես մէկ Ինգլիզի կոնսուլի կամ Ինգլիզի լրագրի թղթակցի գրուածքը»։

Գիլյանեցի օրագիրը գրուած է նոր Զուղայի բարբառով եւ հիմնականում՝ փաստագրական շոր ոճով։ Սակայն ազգային պայքարին զինուորագրուած այս հայրենասէր մարտիկն ու յուշագիրը եւս

երբեմն անկարող է եղել թաքցնել իր ցուն ու տագնապը՝ թողնելով այսպիսի տողեր. «Մեր խեղճ ողորմելի Հայոց ազկըն տիր շատ նեղութիւնումն այ, Գոխտան գաւառ՝ որ զգլրաշն այ թալանում եւ կերպ կերպ փալիւնքանի ան բերում գլուխներանին, որ չի լսէի»:

Գիւնենցի երկը գրուած լինելով ազատագրական պայքարի բուն վերելքի օրերին եւ այդ պայքարի կազմակերպիչներից մէկի ձեռքով՝ համակուած չէ յուսահատական տրամադրութեամբ: Այն աւարտուում է մի իւրօրինակ լաւատեսական վերջաբանով. հեղինակը խնդրում է Մինաս վարդապետին որեւէ կերպ իրեն վառօդ ուղարկել...

Միանգամայն ճշմարիտ է այս երկի վերաբերեալ այն գնահատականը, թէ «պարզամիտ, հասարակ մարդու անարուեստ գրիչը տուել է մի գրաւոր յիշատակարան, որ մի թանկագին վաւերագիր է այն նշանաւոր ժամանակից, երբ հայ ժողովուրդը, դեռ դառն հիասթափումների չհանդիպած, զինական շարժում էր սկսել՝ իր համար մի կտոր ազատութիւն նուաճելու համար»⁽²²⁾:

2.

Պատմական յուշագրութեան մի առաւել նշանակալից նմոյշ է Արրահամ Կրետացու (Թեքիրզաղցի, վախճ. 1737թ.) երկը, որը համարուում է նաեւ պատմագրութիւն⁽²³⁾: Եթէ Գրիգոր Դարանազցու երկը օրագիր-յիշատակարանի, անձնական պատմութեան ու պատմական ժամանակագրութեան մի շաղախ է վերջինիս գերակշռութեամբ, ապա Կրետացու երկը նմանօրինակ շաղախ է, ուր գերակշռում է պատմական յուշագրութիւնը: Դա հիմնականում պայմանաւորուած է այնու՝ որ Արրահամ Կրետացին եղել է Ամենայն Հայոց Կաթողիկոս եւ անձամբ մասնակցել է իր նկարագրած դէպքերին: Նրա երկն ընդգրկում է երկու տարուց աւելի մի ժամանակահատուած (1734-1736 թթ.), նկարագրելով Թահմազդուլի Խանի (ապագայ Նազիր-Շահի) արաշաւանքներն Անդրկովկասում եւ թագադրութիւնը Մուղանի դաշտում: Սակայն պատմական անցքերը Կրետացին շարադրում է՝ ելնելով իր անձից, ինքնակենսագրական հայեցակէտով, մի բան, որ մատնանշում է երկի գլուխների վերնագրերի մեծ մասը («Վասն գնալոյն մեր ընդ սրբազնին ի վանորայս...», «Յաղագս կառավարելոյն իմ զմիաբանսն եւ ծառայելոյ աթոռիս...», «Վասն գնալոյն իմոյ ի մօտ Խանին մեծի եւ անցանել ի մէջ դիակացն» եւ այլն), այսինքն՝ երկի կենտրոնական դէմքը, հերոսը, ինքը՝ հեղինակն է: Ինչպէս նկատել է Մ. Արեղեանը, Արրահամ Կրետացու երկը «խսկապէս պատմութիւն չէ, այլ անձնական յիշատակարան (mémoire), եւ

իրբե աշղպիսին՝ մեր պատմութեան մէջ մի առանձին տեղ է բռնում եւ, կարելի է ասել, եղակի է իր տեսակի մէջ, քանի որ մեզանում պատմական յիշատակարաններ չառ չկան: Արրահամն այն է մանրամասն արձանագրում, ինչ որ ինքն արել ու գործել է, կամ մտածել է: Շատ քիչ բան՝ ուրիշներից լսած: Հենց այդ պատճառով եւս Արրահամի յիշատակարանը չառ հետաքրքիր է, նա ուրիշներին նկարագրելով հանդերձ՝ դարձեալ աւելի ինքն իրեն է նկարագրում, իւր ճաշակը, հասկացողութիւնները, առաքինութիւններն ու արիութիւնը, բայց նա ինքն իրեն նկարագրելով՝ նկարագրում է միանգամայն եւ ժամանակի ընտիր հայ եկեղեցականների՛ն, որոնց լուսագոյն օրինակներից մէկն էլ ինքն է»⁽²⁴⁾, այսինքն՝ Արրահամ Կրետացին յանձին իրեն ներկայացրել է ժամանակի առաջաւոր հոգեւորականութեան ընդհանրական կերպարը:

Հեղինակն ինքը իր երկը համարել է իր եւ իր Աթոռի վերաբերեալ «ճշմարիտ պատմութիւն», որը նա դիւրամբունելիութեան նպատակով ձգտել է շարադրել «կարճ, համառօտ եւ պարզ»: Սակայն նա երբեմն կատարել է որոշ երեւոյթների ու իրողութիւնների մանրամասն նկարագրութիւններ, որոնց շնորհիւ նրա երկը դարձել է առաւել հետաքրքիր ու բովանդակալից:

Կրետացին իր պատմական յիշատակարանը սկսում է այն կէտից, երբ ինքը՝ դեռեւս Թրակիոյ Հայոց հոգեւոր առաջնորդ, 1734-ի Ապրիլին ուղեւորուել է Էջմիածին, ուր հասել է հարիւր օրուայ ընթացքում: Նրան տանում են ժամանակի Կաթողիկոս Արրահամ Սոշաբեցու մօտ, «որ էր նստեալ ի պարտէզն՝ ի ներքոյ մեծի այվանին»: Յետագայ շարադրանքի ընթացքում հեղինակը ուրուագծում է ծերունի Կաթողիկոսի՝ այդ բարեհամբոյր ու հոգատար մարդու կերպարը: Վեհափառի կամքով Արրահամը շրջագայում է Արագածոտն գաւառի, ապա Արարատեան դաշտի վանքերն ու սրբատեղիները, որոնց մասին իր յիշատակարանում թողնում է համառօտ ուղեգրական հատուածներ: Վերադառնալով Էջմիածին՝ նա Կաթողիկոսին գտնում է մահուան մահճում, այսպէս յիշատակագրելով նրա վախճանը. «Եւ այսպէս աջ ձեռն ի մէջ ձեռացս գոլով հեշտ եւ հանգիստ աւանդեաց զմաքուր հոգին իւր ի ձեռն հրեշտակի բարւոյ այնպէս, որպէս թէ ոք հանցէ խնձոր մի ի ծոցոյն եւ տայցէ բարեկամին կամ սիրելոյն իւրոյ»:

Յաջորդ օրը Արրահամ Կրետացուն հարկադրաբար տանում են Երեւան՝ փաշայի կամքով Հայոց Կաթողիկոս օծելու, եւ նոյն այդ օրը Նազիր-Պանի ասպատակութիւններից տագնապած երեւանցիները փախչում են Էջմիածին: Ծանապարհին Արրահամը տեսնում է իր փախըստական հայրենակիցներին եւ յիշատակագրում. «...սոսկացաք

եւ հրացաք զխեղճութիւն նոցին»: Այսպէս մէկ տողով, մի զուսպ ու հակիրճ արտայայտութեամբ, Հեղինակը կարողանում է հեղել իր ցուն ու տազնապը . . .

Արրահամ Կրետացին ընդունելով կաթողիկոսական գաւազանը, «տանջանօք եւ խղճութեամբ» սկսում է կառավարել իր ցրուած ու տառապեալ ժողովրդին: Այդ ժամանակ Նաղիր-Պանը Կարսում յաղթելով թուրքերին՝ շարժում է դէպի Արարատ: Կաթողիկոսը մեծ ընծաներով գնում է նրան ընդառաջ եւ գտնում բարեհաճ ընդունելութիւն: Այստեղից սկսած արդէն մեր առջեւ հանդէս է գալիս Կրետացու երկի երկրորդ գլխաւոր հերոսը՝ Նաղիրը: Հեղինակը մէկ առ մէկ, օրագրային ոճով, նկարագրում է իր բոլոր հանդիպումները Պանի հետ՝ մէջբերելով նրա հետ ունեցած իր զրոյցները, արձանագրելով նաեւ դրանց հետ կապուած իր մտորումներն ու ապրումները: Կրետացին ողորուած իր եւ իր Աթոռի հանդէպ Պանի բարեացակամ վերաբերմունքից եւ անտարակոյս ելնելով իր համայնքի շահերից եւ իր հակաթուրքական տրամադրութիւններից, իր բացայայտ դրական վերաբերմունքն է արտայայտում պարսիկ զօրապետի հանդէպ՝ դրուատելով նրա թէ՛ մարդկային եւ թէ՛ ռազմական յատկանիշները («մեծախելք Պանն», «արի թահմազուլին», «հանճարեղն եւ երկրորդ Աղեկասնդրն»): Այս գիրքերից էլ նա նկարագրում է Նաղիրի պատերազմական գործողութիւնները, Եղվարդի ճակատամարտը, ուր նա խայտառակ պարտութեան է մատնում թուրքերին: Այդ ճակատամարտից յետոյ Հայոց Կաթողիկոսն անցնում է մարտի դաշտերով եւ յիշատակագրում նման տեսարաններ. «Եւ ի Բանապարհին հանդիպեցայ դիականցն՝ սկսեալ ի Աշտարակոյ հանդէն մինչեւ ցԵղվարդ՝ անքիւ բազմութեան սպանելոցն: Եւ դեռեւս կային ոմանք կենդանի, որ խուզէին պարսիկք: Ջայնպիսին եւս սպանէին: Որպէս եւ տեսայ աջօք իմովք, մինչ գևայի ի Բանապարհին: Որ եւ վերա հասայ հայու մի կիսամեռի, մինչ կամէին մահացուցանել, եւ բափեցի ի ձեռաց նոցա . . .»:

Այնուհետեւ Նաղիրը կրկին պաշարում է Կարսի բերդը եւ նեղում թուրքերին, որից յետոյ անցնում է Թիֆլիս, այստեղ հրախրելով նաեւ Արրահամ Կաթողիկոսին: Պանը հրամայում է մայրաքաղաքի բնակիչներին, որ հիմնականում հայեր էին, 300 տուն հանել եւ քչել Պորասան: Բռնի տեղահանուողները ընկնում են իրենց հոգեւոր հովուի ոտքը «եւ կական բարձեալ ողբային, եւ աղաղակն յերկինս ելանէր: Լային, գոռային, գոչէին, երկիր անկեալ բաւալէին եւ աղերսէին»: Եւ տառապեալ կաթողիկոսը տեսնելով իր ժողովրդի աղէտը, գրել է. «փղձկեալ այրեցեալ սրտիկս եւ արեան արտասուս իջուցանէի, եւ դեգերեալ աստանդական ի դռուս մեծամեծաց պա-

դատէի, աղաչէի, հայցէի եւ աղերսէի ազատիլ նոցա ի յայն վշտաց»:
*Կաթողիկոսի աղերսանքները մեզմում են Խանի սիրտը, որը ծանր
փրկագին գանձելով՝ ազատ է արձակում դերուածներին:*

*Կրետացին իր երկում ամենից աւելի հանգամանօրէն պատմում
է Մուղանի դաշտում Նազիրի թագազրութիւնը, նկարագրելով իր ճա-
նապարհորդութիւնը դէպի Մուղան՝ շրջակայ բնութիւնն ու կոտոր-
ները, այլեւ պարսից բանակն ու բարքերը: Ահա պարսից բանակին ու-
ղեկցող նուագախմբի նկարագրութիւնը. «Եւ գուսանք մեծամեծ եւ
փոքր եւ մանկունք փափկածայնք, որք ունէին ուրարս, նման ուրա-
րին եկեղեցւոյ մերոյ ձգեալ ի պարանոց մանկանցն, եւ փաթոյթ ընդ
բազուկս Բ [2] ձեռնոց եւ Բ [2] թգաչափ կախեալ ծայրք ուրարին
ի Բ [2] բազկացն, եւ պոժոժունս շարեալ ի յոտսն, եւ այնպէս պա-
րէին առաջի մեծի Խանին եւ առաջի բազմութեանն: Որք էին թուով
ի Բ [22], եւ այլ ոմանք սանթուրք եւ տամպուրայք, էմանեք, էա-
նոնք եւ այլ գործիք նուագարանաց եւ անօթք երաժշտականաց նստեալ
ի բացեալ յանդիման Խանին ածէին եւ հնչեցուցանէին, եւ իւրաքան-
չիւրք այլ եւ այլ խօսէին՝ ըստ ոճի նուագարանի իւրում: Իսկ պարիչ-
քնն եւս խաղ ասէին ի պարելն իւրեանց, բայց՝ ի մի գոյն եւ ի մի ե-
ղանակ: Պարողքն՝ ի մի գոյն, իսկ բազմեալքն՝ ըստ իւրաքանչիւր
հանոյիցն երգէին: Եւ այնպէս՝ երգիչք եւ պարիչք միւնչ ի յօգուտ
ժամ մի երգեցին եւ պարեցին, եւ բուրվառք միշտ ի շրջագայելն»:*

*Կրետացին պատմում է, թէ ի՞նչպիսի խորամանկ ձեւերով է
Նազիրը դիմում իր շուրջը նախապէս համախմբած պարսից տէրու-
թեան իշխանաւորներին, իբրեւ նրանց համաձայնութեամբ ու խրնդ-
րանքով, ձեռք բերելու շահական գաճը: Այդ ընթացքում նենդ Խանը
նոյնիսկ ճառում է «ինքնաքննադատարար», ասելով. «Ես գիտեմ,
գի բազումք ինձանէ պիտամաղ են եղեալ: Եւ իրաւունս ունին, գի
բազմաց ապրանս խլեցի, գրագումս մահացուցի, գումանս կորուսի,
եւ յոյովից գոսկին եւ գարծաթն խլեցի, եւ շատ տեղիս աւերեցի, եւ
երկիրս սասանեցուցի եւ աղքատացուցի: Վասն որոյ բաւական է այս
չափս: Թող հանգչին մարդիկք գոնէ յայսմ յետէ ի նեղութենէ յայս-
մանէ»:*

*Այս կապակցութեամբ ճիշդ է նկատուած, որ «իր այս բնութա-
գրումով, ուր մեր առջեւ յանձնում է արեւելքի իսկական բռնակալ Նա-
զիրը՝ Աբրահամ Կաթողիկոսը յօդս է ցնդեցնում իր իսկ իդէալական
նացրած Նազիրին. այս մի քանի նախադասութիւնն է իսկութիւնը,
դրանք են, որ տալիս են բռնակալի ու նրա իշխած ժամանակաշրջա-
նի ճիշդ ու «օբյեկտիվ» պատկերը. . . Այդ մի քանի նախադասութիւն-
ներն են կազմում Կրետացու յիշատակարանի ուղն ու ծուծը, բնու-
թագրում են նրա հեղինակի հնարամտութիւնը, յանդգնութիւնն ու*

խիզախութիւնը: Հայ պատմագիրներին մօտ Հայաստանի բռնակալներից եւ ոչ մէկն իր բերանով նման ինքնախարագանում չի արել: Մեր պատմագիրները անարգանքի սիւնին են գամել միայն մահկանացուները կնքած բռնակալներին, մինչդեռ Կրետացին այդ տողերը գրել է ոչ միայն Նաղիբի կենդանութեան՝ այլ ծաղկման օրերին»⁽²⁵⁾:

Երկի վերջին գլուխներում յուշագիր-պատմիչը խօսում է Հայաստանի մի շարք սրբատեղիներն ու բնակավայրերը կատարած իր ուղեւորութիւնների՝ այլեւ որոշ քաղաքական անցքերի ու հանդիպումների մասին: Նկարագրելով Հայոց «գեղեցկաչէն եւ պատուական» վանքերը, նա խնամածու հօր վշտակցութեամբ աւազում է նրանց աւեր ու ամալի վիճակը, իր ողբը խառնելով միջնադարեան Հայ ողբագիրների բազմաձայն համերգին. «Աւա՛ղ ժամանակիս նեղութեան եւ նուազութեան ազգիս իմոյ Արամեան: Զի գալարին աղիք իմ ի տեսանելն զաննման վանորայսն եւ զսուրբ ուխտան՝ վասն ոչ զոյոյ բաւական թեմ եւ վիճակ: Եւ թէպէտ գոն, բայց՝ ամալի եւ անչէն, անմարդարնակ: Եւ թէ՛ զտանին ոմանք աղքատացեալք, եւ նոքա ոչ կարեն օգնել կամ լցուցանել զպէտս եւ զպակասութիւն վանորէիցն, այլ եւ ինքեանք եւս կարօտ են դարմանելոյ ի վանորէից»:

Արբաճամ Կրետացու երկը ժամանակի պատմական յուշագրութեան ամենաարժէքաւոր նմոյշն է, որը ներկայացնում է Հայ ժողովրդի պատմութեան մի կենդանի էջը եւ այն արձանագրող հեղինակի՝ հայրենանուէր Հայ հոգեւոր-քաղաքական գործչի կերպարը:

5.

ԺԸ. դարի երկրորդ կէսի արեւմտահայ իրականութիւնն է պատկերում Կ. Պոլսի պատրիարք Գրիգոր Պասմանեանի (Աստուածատրեան. ծն. 1715) յիշատակարանը⁽²⁶⁾: Վերջինիս պահպանուած ձեռագրերը, ըստ երկի հրատարակիչ Բ. Կիւլեսերեանի, «կանոնաւոր կերպով գրուած օրագրութեան մը մնացորդներ են»: Ընդգրկում է 1758-1773 թուականների ընթացքում իր՝ հեղինակի «պաշտօնական կեանքին ու դժբախտութիւններուն պատմութիւնը»: Պասմանեանն, իր իսկ խոստովանութեամբ, իր երկը գրել է «անհեթեթ եւ անյարմար բանի»: Նա ինքը զգալով իր ոճի ճապաղութիւնն ու երկարաբանութիւնը՝ արդարացել է, ասելով թէ «ցաւակիրն լինի խօսնակ եւ սիրահարն միշտ երգնակ»: Նա երբեմն ձգտել է «յղկել», գեղեցկացնել իր խօսքը պատկերաւորման եւ արտայայտչական միջոցներով: Հետեւեալ տողում, օրինակ, դիմել է որոշ հնչիւնախաղի. «Իսկ ի ՌՄԻԲ (1773) քուականին, յառաջադէմքն ազգիս եւ անաչտ խորհրդոյն խորհրդակամք հանդերձ խորհրդապետիւն խորհեցան եւ ի խորհուրդ

մտին»։ Երբեմն էլ հեղինակը խօսքի յուզական շեշտն ուժեղացնելու համար մէջ է բերել չափածոյ հատուածներ։ Բ. Կիւլեսերեանի խօսքերով սասած․ շնայած «գրական եւ հոետորական կարկառուն շա՛տ մը թերութիւններուն»՝ Գրիգոր Պասմաճեանի յիշատակարանը բովանդակում է արժէքաւոր տեղեկութիւններ։ Այն ներկայացնում է Յովհաննէս Կոլոտից յետոյ Կ. Պոլսի, այլեւ Երուսաղէմի, պատրիարքական վիճակը, «բարացուցական օրինակներով կը պատկերացնէ այդ դարերուն ամիրայական բարքերն ու վարքերը, այդ դասակարգի կեղծուպատիր արտաքինի ետեւ իրական կեանքի ծանծաղուտը»։ Ահա մի հատուած նրա մերկացումներից․ «Սոքա (ամիրաները — Ղ. Բ․), որք երբեմն հարկադիրք լինէին հաւաքել գողորմութիւնս ի յանուն աղքատաց, բայց զկնի առնուին եւ սեփականէին ի յինքեանս․ որպէս եղել ի հրկիզութենէ ազատողաց պատմառաւն հաւաքեցաւ․ գոր յաւելորդն նորին առին ինքեանք բարեպաշտօնք եւ վասն պիտոյից իւրեանց մսխեցին ուր եւ կամեցան եւ գայլսն ըստ սոյն կերպի։ Պանծային ի վերայ պերնաշխութեանց իւրեանց, զի յորժամ գայլ ոք խոնարհեալք ողջունիցէին զինքեանս, յայնժամ բարձրամտէին եւ համարէին զինքեանս որպէս գերկինս»։

Մի առաւել ընդարձակ օրագրութիւն է հեղինակել մէկ այլ նըշանաւոր ազգային-հոգեւոր գործիչ՝ Յովսէփ Արղութեանը (1743-1801), որը ուստահայ թեմի առաջնորդն էր եւ 1783-ին կազմել ու ուստական արքունիք էր ներկայացրել հայ-ուստական դաշնագրութեան մի նախագիծ։ Արղութեանը որոշակի աւանդ ունի նաեւ ուստահայ գաղթօջախների կրթական ու տպագրական գործի ծաւալման ստպարէզում։ Ահա իր գործունէութեան եւ առհասարակ հայ-ուստական յարաբերութիւնների մասին է գրել նա իր կազմած Օրագրում, որը հրատարակ է հանուել հատուածաբար⁽²⁷⁾։ Սակայն, ինչպէս նկատել է Լէօն, «այս օրագրութիւնների մէջ Յովսէփ Արքեպիսկոպոսը պարզ ու անարուեստ պատմող է, եւ նրա այդ գործերը գրական արժանաւորութիւններ համարեա բոլորովին չունեն, թէեւ հետաքրքրական եւ կարեւոր տեղեկութիւններ են պարունակում նրա ժամանակի վերաբերմամբ»⁽²⁸⁾։

ԺԸ․ դարում որոշ հայ հեղինակներ յուշագրական երկեր են գրել նաեւ այլ լեզուներով։ Այսպէս, արեւմտահայ երաժիշտ, թամբուրահար Քիւչիւկ Արութինը Նաղիր-Շահի հնդկական արշաւանքի ժամանակ Կ. Պոլսից ուղեւորուել է Հնդկաստան եւ գրել հայաստան թուրքերէն մի հետաքրքիր ուղեգրութիւն⁽²⁹⁾։ Իսկ հայ ազատագրական շարժման խոչորագոյն գործիչ Յովսէփ Էմինը (1726-1809) իր նշանաւոր յուշերը շարադրել է անգլերէն⁽³⁰⁾։ Աւելի ուշ Յարութիւն Արարատեանը (ծն․ 1774թ․) իր ինքնակենսագրութիւնը գրել է ուստ-

սերէն⁽³¹⁾։ Բոլոր այս երկերը, ըստ ամենայնի, պատկանում են Հայ ազգային գրականութեանը եւ այդպէս էլ, իրաւամբ, դիտւում են գրականագիտութեան մէջ։

Յովսէփ Էմինի եւ Յարութիւն Արարատեանի երկերը «զարգացման մի նոր աստիճանի վրայ դրեցին Հայկական մեմուարային գրականութիւնը»⁽³²⁾ եւ ըստ էութեան դուրս են գալիս միջնադարի սահմաններից՝ թեւակոխելով Հայ նոր գրականութեան ոլորտը։

6.

ՓԷ.-ՓԸ. դարերի Հայ յուշագրութիւնը հանդէս է գալիս երկու հիմնական ժանրերով՝ ուղեգրութիւն եւ օրագրութիւն, որոնք փաստագրական-գեղարուեստական արձակի նմոյշներ են։ ՓԷ. դարի ուղեգիրներից են Աւգուստինոս Բաջեցին, Յովհաննէս Թութունջին, Մահտեսի Շահմուրատը։ Հայ ուղեգրութեան պատմական եւ գեղարուեստական առումով ամենաարժէքաւոր երկը ստեղծել է Միմէոն Լեհացին, որը լաւագոյնս արտացոլել է Զարթօնքի շրջանի Հայ մտաւորականի անձնական եւ անանձնական յոյզերն ու խոհերը, Հայրենասիրական գազափարները։

Պատմական եւ ուղեգրական ինքնակենսագրութիւնների հիմքի վրայ է առաջացել յուշագրութեան միւս ժանրը՝ օրագրութիւնը, որի առաջին նմոյշները ստեղծուել են ՓԷ. դարում։ Յայտնի են Զաքարիա Ագուլեցու, Մինաս Ամզեցու եւ Երեմիա Չէլչպի Քէօմիւրճեանի օրագրութիւնները։ Վերջինս Միմէոն Լեհացու Ուղեգրութեան հետ միասին ժամանակի յուշագրութեան լաւագոյն նմոյշն է, ուր քաղաքական ու Հասարակական կեանքի ոլորտում ներկայացւում են ժամանակակից Հայ մարդը, մտաւորականն ու Հայրենասէրը։

ՓԸ. դարում առաւել լայն տարածում են գտնում օրագրական-ինքնակենսագրական երկերը (Աւետիք Թոխաթցի, Եղիա Կարնեցի, Պետրոս Դի Սարգիս Գիլանեց)։ Պատմական յուշագրութեան մի ինքնատիպ օրինակ է Աբրահամ Կրետացու երկը, որը ներկայացնում է Հայ ժողովրդի պատմութեան մի գրուագը եւ հեղինակի՝ Հայրենասուէր Հայ հոգեւոր-քաղաքական գործչի կերպարը։

Յուշագրական երկեր են գրուել նաեւ օտար լեզուներով։ Այդ ստեղծագործութիւնները, սակայն, պատկանում են Հայ ազգային գրականութեանը։ Յատկապէս Յովսէփ Էմինի անգլերէն ինքնակենսագրութեամբ Հայ յուշագրական գրականութիւնը բարձրացել է մի նոր աստիճանի եւ մուտք գործել Հայ նոր գրականութեան սահմանները։

Հ. Բ.

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ա. Յովհաննիսյան, *Դրուագներ Հայ Ազատագրական Մտքի Պատմության*, հտ. 2, Երևան, 1959, էջ 85:
2. Ք. Պատկանյան, *Նշխարք Մատենագրութեան Հայոց*, Պետքրքուրգ, 1884, էջ 6 եւ հոմ.:
3. Տես՝ Հ. Ամասեան, XVII Դարի Ազատագրական Շարժումներն Արեւմտեան Հայաստանում, Երևան, 1961: Վաւերագրեր՝ էջ 301-311, 315-319:
4. *Օրագրութիւն Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեանի*, հրատարակեց Մ. Նշանեան, Երուսաղէմ, 1939, Յաւելում՝ էջ 512-515:
5. *Սիմէոն Դպիր Լեւոնայ Ուղեգրութիւն եւ Յիշատակարանք*, ուսումնասիրեց եւ հրատարակեց Ն. Ակիմեան, Վիեննա, 1936:
6. *Պատմութիւն Փարէզի եւ Վեննայի, Պատմութիւն Վենետիկ Քաղաքին*, աշխատասիրութեամբ՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանեանի, Երևան, 1966, էջ 238:
7. *Սիմէոն Դպիր Լեւոնայ Ուղեգրութիւն եւ Յիշատակարանք*, Առաջաբան, էջ ԼԸ:
8. *Չաբարիա Ազուլեցու Օրագրութիւնք*, Երևան, 1938:
9. *Քաղճափէպ*, Վենետիկ, 1937, էջ 16:
10. Լեւո, *Երկերի Ժողովածու*, հտ. 3-րդ, Երևան, 1969, էջ 365:
11. *Օրագրութիւն Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեանի*, հրատարակեց Մ. Նշանեան, Երուսաղէմ, 1939, էջ ՃԼԶ:
12. *Ջուարեհիթեհի* [խմբ.]:
13. *Քաղճափէպ*, Վենետիկ, 1867, էջ 129-136, 180-181, 202-209, 301-307, 328-331, 370-380, 1868, էջ 114-119, 145-148, 246-249, 320-324 եւ 1869, էջ 177-185:
14. *Քաղճափէպ*, Վենետիկ, 1897, էջ 459-463:
15. Ն. Աղբալեան, *Ամբողջական Երկեր*, հտ. 2, Պէյրուք, 1966, էջ 145:
16. Անտիպ է. որոշ հատուածներ Ե. Փելիկեանը հրատարակել է *Քաղճափէպում*, Վենետիկ, 1937, էջ 138-323 եւ 1941, էջ 46-53:
17. *Մատիս*, Կ. Պոլիս, 1874, ք. 1489-1500: Աւետիք Թոխաբցուն նոյնացրել են նշանաւոր Երկաթէ Դիմակով Մարգու հետ: Նրա շուրջ ստեղծուել է բաւական ծաւալուն գրականութիւն: Այս մասին տես՝ Հ. Ամասեան, *Հայկական Մատենագիտութիւն*, հտ. Բ., Երևան, 1976, էջ 980-983:
18. Այս երկի բնագիրը գտնուում է Վիեննայի Միխիթարեան միաբանութեան մատենադարանում: Որոշ հատուածներ հրատարակել է Յ. Սսկեանը իր *Եզիա Աստուածատուրեան-Մուշեղեան եւ Իր Գրական Արտագրութիւնները*, Վիեննա, 1927, գրքում:
19. Հայ միջնադարեան գրականութեան միջազգային գիտաժողով, *Չեկուցումների Դրոյթներ*, Երևան, 1986, էջ 162:
20. Ա. Յովհաննիսյան, էջ 571:
21. *Կունկ Հայոց Աշխարհի*, Թիֆլիս, 1861, էջ 81-112, 181-212:
22. Լեւո, *Երկերի Ժողովածու*, հտ. 3-րդ, գիրք 2-րդ, Երևան, 1972, էջ 524:
23. Արքահամ Կրետացի, *Պատմութիւն*, քննական բնագիր, ուստերէն բարգմանութիւն, առաջաբան եւ ծանօթագրութիւններ Ն. Դարդանեանի, Երևան, 1973:
24. Մ. Արեղեան, *Երկեր*, հտ. Դ, Երևան, 1970, էջ 530:
25. Լ. Բարսեղեան, *Դրուագներ Հայաստանի XIV-XVIII Դարերի Պատմագրութեան*, Երևան, 1984, էջ 180:

26. Յիշատակարան Պատմական Գրիգոր պատրիարքի, Փարիզ, 1908:
27. Կունկ Հայոց Աշխարհի, 1863, էջ 321-328, 419-444, 505-519, 582-599: Գիտ Ա. Բեճյ. Աղանեանց, Դրան Հայոց Պատմութեան, գիրք Թ, Թիֆլիս 1911, էջ 2-47:
28. Լեօ, էջ 468:
29. Մատենադարանի Գրական Նիւթերի Ժողովածու, հտ. 1, Երևան, 1941, էջ 101-128:
30. Յովսէփ Էմինի կեանքն ու գործը, անգլերէն թնագրից թարգմ. Յ. Խաչմանեան, Պէյրուս, 1958:
31. Արսեմի Արարատեցու կեանքը, Մոսկուա, 1981 (ռուսերէն):
32. Կ. Դանիէլեան, Հայ Մեմուարային Գրականութեան Պատմութիւնից, Երևան, 1961, էջ 85:

THE MEMORABILIA OF THE LATE MIDDLE AGES

(SUMMARY)

HENRIK BAKHCHINIAN

The article deals with the various Armenian authors, memoirists and diarists of the late Middle Ages and the Renaissance period of the XVIII-XIX centuries. In the long run of critical analysis the author finds that their work pertains not only to history, geography, voyages and literary expression, but also to socio-political conditions of the time. Some of these authors are high ranking clericals of the Armenian Church and are contemporaries and actors in the events they talk of, others are great merchants and traders and are self-made Armenian politicians of the time, endeavouring to liberate Armenia from the Ottoman, Persian and Russian yoke, while some others are just travellers who have visited some of the major religious and political centers of their time. The majority of the memoirs and diaries, published or otherwise, are in Armenian, while some are in Armenian-script Turkish, English or Russian.

The author of the article presents some twenty-three memoirists and diarists, analyzes their works not only as a witness of the times they came into being, but also as literary works. This latter is the reason why Mr. Bakhchinian dwells at length on the problems of style, language and artistic value of each work tackled and finds that some of these authors are men of letters, and their work is enhanced with beauty

and elements of art, and hence can be considered as literary representatives of their time. Only a very small minority of these memoirists and diarists are just simple and plain writers, and hence are to be accepted as the witnesses of their time.

Mr. Bakhchinian presents in his lengthy article the various works of Augustinus Bajetzi or Bajentz, the Armenian Patriarch Hovhannes Toutounji or Vanetzi or Areveltzi, Mahtesi Shahmourat or Khoja Mourat Baghishetzi, Yeremia Chelepi Koemurdjian, the Chorist Simeon Lehatzi, or Zamosatzi or Mikolayovich, Khachatour Tokhatetzi, Grigor Daranaghtzi, the merchant Zakaria Agouletzi, the Armenian Patriarch Minas Amdetzi, David Yevdokiati, Father Zvar Jierji Oghlu, the Armenian Patriarch Avedik Paghtassarian Tigranakertzi, the Mekhitarist Father Hovhannes Tovmajan or Tovmajian, the Armenian Patriarch Avedik Tokhatetzi, Yeghia Karnetzi or Asdwadzatourian-Mousheghian, the merchant Petros di Sargis Gilanentz, the Armenian Catholicos Abraham Kretazi, the Armenian Patriarch Grigor Pasmadjian, Hovsep Archbishop Arghoutian, the drummer Kuchuk Aroutin, Hovsep Emin, and Haroutioun Araratian.

At the end of his study and analysis the author of the article concludes that all these memorabilia are fundamentally either diaries of voyages, or biographical ones, and are major first hand sources for the study of Armenian political, social, religious, economic and literary history of not only the Armenian people of the late Middle Ages but also that of the surrounding peoples and nations.